ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻՑ

1998 Թ.

1—15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

№ 19—21 (128—130)

ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

Մեծարում

ՀՀ ԳԱԱ նախագահության հերթական նիստը, որը վարում էր ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, հոբելյանական էր: Նշվում էր մեծանուն ֆիզիկոս, ակադեմիկոս Միքայել Տեր-Միքայելյանի ծննդյան 75 և մանկավարժական գործունեության 50 տարին:

Մ. Տեր-Միքայելյանը այն գիտնականներից է, որի անունը հայտնի է ոչ միայն Հայաստանում, նախկին ԽՍՀՄ երկրներում, այլև ողջ աշխարհում: Նրա կանխատեսումները, գիտական համարձակ վարկածները միտված են եղել դեպի ապագան և հիմք են ծառայել ֆիզիկայի նոր ուղղությունների զարգացման համար:

Մեծանուն գիտնականը մեծ հետք է թողել հայ գիտության անդաստանում, ստեղծել դպրոց և դաստիարակել տաղանդաշատ ֆիզիկոսների մի ամբողջ սերունդ: Եվ եթե ֆիզիկայի հայկական դպրոցը արժանապատիվ համարում և վարկ ունի աշխարհում, ապա դրանում անգնահատելի մեծ է աշխարհահռչակ ֆիզիկոս Մ. Տեր-Միքայելյանի վաստակը նաև, որը եղել, մնում է ակադեմիայի պարծանքներից մեկը:

Նշանավոր ֆիզիկոսին, տաղանդաշատ գիտնականին, սկզբունքային մարդուն ջերմորեն շնորհավորեցին, մեծարման ու գնահատանքի խոսքեր ասացին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը, ակադեմիկոսներ Գալուստ Գալոյանը, Ռադիկ Մարտիրոսյանը, Ալպիկ Մկրտչյանը, Թինա Ասաթիանին, Լեսներ Աղալովյանը, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Էդուարդ Վարդանյանը, փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը հոբելյարին հանձնեց գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության ողջույնի ուղերձը, որում մասնավորապես ասված է.

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և ֆիզիկամաթեմատիկական ու տեխնիկական գիտությունների բաժանմունքը ջերմորեն շնորհավորում են Ձեր փառավոր հոբելյանը՝ ծննդյան 75-ամյակը և մանկավարժական գործունեության 50 տարին:

Ձեր գիտական բեղուն գործունեությունը, անսպառ եռանդն ու գիտելիքները, մանկավարժի Ձեր բարձր հմտությունը, կազմակերպչական տաղանդը հսկայական ավանդ բերեցին Հայաստանի գիտության զարգացմանը: Ձեր գիտական աշխատանքները ճանաչում ստացան ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Բյուրեղում ռելյատիվային մասնիկի կոգերոնտային արգելակային ճառագայթման Ձեր մշակած տեսությունը մեծ նշանակություն ունեցավ բարձր էներգիաների ֆիզիկայի զարգացման համար: Դուք կանխատեսեցիք միասեռ միջավայրում արգելակային ճառագայթման միջավայրի խտության էֆեկտը:

«Էլեկտրամագնիսական պրոցեսների վրա միջավայրի ազդեցությունը բարձր էներգիաների ժամանակ» Ձեր մենագրությունը արժանացավ լայն ճանաչման, թարգմանվեց անգլերեն և դարձավ ֆիզիկոսների մի քանի սերունդների սեղանի գիրքը:

Տեսականորեն կանխատեսված Ձեր էֆեկտները խթան հանդիսացան փորձարարական բազմաթիվ հետազոտությունների և կիրառվում են ռելյատիվային մասնիկների հետազոտությունների համար:

Ոչ գծային օպտիկայի բնագավառում Ձեր հիմնարար հետազոտությունները սկիզբ դրեցին Հայաստանում քվանտային էլեկտրոնիկայի զարգացման և հատուկ մոնոբյուրեղների արտադրության համար:

Նյութի հետ լույսի փոխներգործության բնագավառում Ձեր և Ձեր աշակերտների ուսումնասիրությունների շնորհիվ ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, որի հիմնադիրն եք Դուք և որի տնօրենն էիք ավելի քան քառորդ դար, այսօր ճանաչված կենտրոն է ռեզոնանսային օպտիկական երևույթների և բարձրջերմային գերհաղորդականության բնագավառներում:

Մենք արժանին ենք մատուցում Ձեր մեծ վաստակին բարձր որակավորում ունեցող գիտնականների պատրաստման գործում:

Թանկագին Միքայել Լևոնի: Սրտանց մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, ամենայն բարիք, մարդկային մեծ երջանկություն և գիտական նոր հայտնագործություններ՝ ի փառս հայրենական գիտության:

Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս

Յու. Հ. ՇՈՒՔՈՒՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Ֆ.Մ.Տ.Գ. բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

Ուղեղը՝ [redacted] ճանաչման բարդ ճանապարհին

Second Conference of the Armenian IBRO Association

22 - 24 September 1998

Yerevan, Republic of Armenia

Նեյրոգիտության առարկան ուղեղն է և նրա ֆունկցիոնալ միավորները՝ նեյրոններն ու նեյրոլգիան: Այսօր գիտության նկատմամբ կա աննախադեպ, վիթխարի հետաքրքրություն, ստացվում են տպավորիչ և հուսադրող արդյունքներ: Բավական է նշել, որ համաշխարհային գիտությունը ուղեղի գործունեության վերաբերյալ վերջին 15 տարիներին ավելի շատ նյութ է կուտակել, քան իր պատմության ողջ ընթացքում:

Անչափ ուրախալի է, որ նեյրոգիտությամբ խոր և հիմնավոր կերպով, համաշխարհային գիտության բարձրագույն չափանիշներով զբաղվում են Հայաստանում նույնպես: Մեզ մոտ տաղանդավոր շատ գիտնականներ աշխատել և շարունակում են ընտեղծագործական որոնումները ուղեղի գործունեության բարդագույն սկզբունքների մեխանիզմների ճանաչման ուղղությամբ: Անշուշտ, հիմնարար հարցերի լուծումը պահանջում է կոլեկտիվ ջանքերի միաձուլում և բազմաբնագավառային մոտեցում՝ նեյրոֆիզիոլոգների, նեյրոքիմիկոսների, նեյրոդեղաբանների, կլինիցիստների և հոգեբույժների ներգրավմամբ: Հենց այդ խնդիրն էր հետապնդում ուղեղի հետազոտությունների միջազգային կազմակերպության ստեղծումը: Չնայած իր հումեմատաբար կարճ գոյությանը (սկսած 1958 թվականից), այդ կազմակերպությունը այսօր ունի համաշխարհային համբավ: Ինչպես ցանկացած պատկառելի կազմակերպություն՝ ԻԲՌՕ-ն ունի իր կանոնադրությունը, ուր վերջերս էական շտկում կատարվեց՝ տարբեր երկրների ուղեղի հետազոտությունների տեղական կազմակերպությունները, կախված իրենց հեղինակությունից և թվաքանակից, հնարավորություն ստացան դառնալու նրա կոլեկտիվ անդամներ: Նախկին Խորհրդային Միության երկրներից առաջինը այդ հնարավորությունից օգտվեց Ռուսաստանը: Ուղեղի հետազոտությունների հայկական միավորումը դարձավ երկրորդը:

Այս փաստը պայմանավորված է երկու հանգամանքով. նախ, հայկական նեյրոգիտության մակարդակն այսօր բավականաչափ բարձր է, և երկրորդ՝ հայ գիտնականներն այս բնագավառում ավանդաբար գրավել են առաջատար դիրք: Նեյրոֆիզիոլոգիայի երկու ուղղություններով՝ ուղեղաքիմ կառույցների, ուղեղի ֆիզիոլոգիա և վեգետատիվ նյարդային համակարգի ֆիզիոլոգիա, որոնք համապատասխանաբար ղեկավարվում են հայ գիտնականներ Վ. Ֆանարջյանի և Հ. Բակլավաջյանի կողմից, Հայաստանը մշտապես առաջատար է եղել նախկին Խորհրդային Միությունում: Բարձր հեղինակություն ունեցող «Նեյրոբիմիա» հանդեսի խմբագրությունը վստահվել է հայ գիտնական Ա. Գալոյանին: ԻԲՌՕ-ի գլխավոր պարբերականի՝ «Նեյրոսայենս» հանդեսի գոյության առաջին օրից նրա խմբագրական կոլեգիայում անփոփոխ աշխատում է Վ. Ֆանարջյանը:

Բոլորովին վերջերս կարևոր իրադարձություն տեղի ունեցավ ԻԲՌՕ-ի հայկական միավորման կյանքում: ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի նիստերի դահլիճում անցկացվեց ԻԲՌՕ-ի Հայկական միավորման երկրորդ գիտաժողովը: Այն նվիրված էր արդի ֆիզիոլոգիայի կարկառուն դեմքերից մեկին՝ նշանավոր ֆիզիոլոգ Լ. Ա. Օրբելուն և նրա ստեղծած դպրոցին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Վ. Ֆանարջյանը: Նա խոսեց Լ. Ա. Օրբելու անցած գիտական փայլուն ուղու և տաղանդավոր ու բազմաբնույթ հետազոտությունների մասին, որոնք ընկած են նրա դարակազմիկ հայտնագործությունների հիմքում: Նրա գաղափարներն ու դրույթներն այսօր էլ հուսալի հիմք են ծառայում նոր հետազոտությունների համար: Օրբելին ստեղծել է ֆիզիոլոգիական գիտության այնպիսի առաջատար ուղղություն, ինչպիսին էվոլյուցիոն ֆիզիոլոգիան է: Նա բացահայտել է սիմպաթիկ նյարդային համակարգի հարմարողականացնող ֆունկցիան, ուսումնասիրել բարձրագույն նյարդային գործունեության կարևորագույն սկզբունքներ, ընտեղծել նոր հիմնադրույթ ֆունկցիաների ներդաշնակեցման և նեյրոէնդոկրինային համակարգի վերաբերյալ, զարգացրել ինքնատիպ գաղափարներ ուղեղի, զգայական համակարգերի գործունեության վերաբերյալ, հետաքրքիր մտքեր շարադրել ծայրահեղ վիճակների ֆիզիոլոգիայի առնչությամբ: Լ. Ա. Օրբելու ստեղծած դպրոցը ֆիզիոլոգիական գիտության պատմության մեջ ամենանշանակալիներից և կարևորներից մեկն է: Այդ դպրոցի փայլուն ներկայացուցիչներից են նաև հայ նշանավոր ֆիզիոլոգներ Հասրաթյանը, Ալեքսանյանը, Քարամյանը, Վիկտոր Ֆանարջյանը արդարացիորեն ընդգծեց այն փաստը, որ Լ. Ա. Օրբելու գաղափարներն այսօր էլ ապրում են լիարժեք կյանքով: Եվ գիտաժողովի արդյունքները լիովին հաստատեցին սրա ճշմարտությունը:

Գիտաժողովի մասնակիցները ծանոթացան Հայաստանում կատարված ուղեղի հետազոտության նորագույն նվաճումներին: Ու թեև գիտաժողովի գլխավոր կազմակերպիչը ֆիզիոլոգիայի ինստիտուտն էր, նրա աշխատանքներին իրենց ամենաակտիվ մասնակցությունը բերեցին կենսաքիմիայի, փորձարարական կենսաբանության, ֆիզիոթերապիայի ինստիտուտների լավագույն գիտական ուժերը: Անչափ ուրախալի էր ուղեղով զբաղվող կլինիցիստների լայն մասնակցությունը և զուտ տեսաբանների և գործող բժիշկների երկխոսության հնարավորությունը: Գիտաժողովին մեծ պատասխանատվությամբ մասնակցեցին հանրապետության բուհերի (պետական համալսարան, պետական բժշկական համալսարան, մանկավարժական ինստիտուտ) ուղեղի պրոբլեմներով զբաղվող մասնագետները:

Գիտաժողովում ներկայացվեցին 51 աշխատանքներ՝ տարբեր բնույթի, բովանդակության, բոլորովին էլ ոչ հավասարարժեք, որոնցից շատերը իրավամբ արտացոլում են Հայաստանում նեյրոգիտության զարգացման ներկա վիճակը:

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Հերթական նիստը կայացավ Երևանում

Վերջերս Երևանում կայացավ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի կառավարիչների խորհրդի 17-րդ նիստը: Ի դեպ, սա առաջին նիստն էր, որ գումարվում էր Մոսկվայից դուրս, և որին մասնակցում էր Հայաստանը:

Մինչև երևանյան նիստի բննարկած հարցերին անդրադառնալը, մի քանի խոսք Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) մասին:

Այն հիմնադրվել է 1992 թվականի նոյեմբերին՝ որպես միջուկային զենքը ՉՏԱՐԱՄԵԼՈՒ ծրագիր: Կենտրոնի գլխավոր նպատակն է՝ Անկախ Պետությունների Համագործակցության երկրների (նախկին ԽՍՀՄ հանրապետությունների) զենքի հետ առնչություն ունեցող գիտնականներին և մասնագետներին հնարավորություններ տալ գիտական հետազոտություններ կատարել ոչ թե սպառազինությունների բնագավառում, այլ խաղաղ նպատակներով: Ինչո՞ւ: Խնդիրն այն է, որ թեև «սառը պատերազմի» ավարտից հետո նվազել է միջազգային անվտանգությանն սպառնացող վտանգը, սակայն միաժամանակ առաջացել է ուրիշ պրոբլեմ: Այն, որ մասսայական ոչնչացման զենքի և նրա արձակման միջոցների բնագավառում գիտելիքներ ունեցող գիտնականներն ու մասնագետները նախկին ԽՍՀՄ էլիտար ինստիտուտներից կարող էին տեղափոխվել ծայրահեղական խաղախականություն վարող երկրները և մասնակցել նրանց անաբեկչական ծրագրերի իրականացմանը:

Աշխարհի խաղաղությանը և կայունությանը սպառնացող ամենալուրջ վտանգը, որով այսօր մտահոգված է միջազգային գիտական հանրությունը, միջուկային, կենսաբանական և քիմիական զենքերի հետ կապված տեխնոլոգիաների և հրթիռային միջոցների տարածման խնդիրն է: Ահա այս վտանգը նախազգուշացնելու և կանխելու մտադրությամբ ճապոնիայի, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Եվրոպական համագործակցության երկրները ստեղծեցին Միջազգային գիտատեխնիկական կենտրոն, որը կոչված է նյութական աջակցություն ցույց տալ սպառազինություններով զբաղվող ինստիտուտներին և գիտնականներին՝ հարմարվելու ստեղծված նոր պայմաններին, փոխելու գիտական հետազոտությունների ուղղվածությունը և մանավանդ՝ չգայթակղվելու ծայրահեղական երկրների շռայլ առաջարկություններով: ԱՊՀ երկրներից ՄԳՏԿ անդամ են արդեն Հայաստանը, Բելոռուսը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը: 1997-ին ՄԳՏԿ-ի ստեղծման համաձայնագրին միացավ Նորվեգիան: Կորեական Հանրապետությունը նույնպես պաշտոնապես միացել է Համաձայնագրին և արդեն հայտնել է ֆինանսական մասնակցության իր պատրաստությունը:

1994 թվականից սկսած Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը խաղաղ նպատակով գիտական և տեխնիկական ծրագրերի համար ներդրել է 155 միլիոն ամերիկյան դոլար: Դրա շնորհիվ Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մյուս երկրների սպառազինություններով զբաղվող ավելի քան 17 հազար գիտնականներ ստանում են Կենտրոնի դրամաշնորհներ, որոնք կոչված են նրանց տաղանդը և ստեղծագործական ներուժը վերակողմնորոշել դեպի խաղաղ գիտական հետազոտությունները:

Գնալով ավելանում է այն պետությունների թիվը, որոնց կառավարությունները միացել են ՄԳՏԿ ստեղծելու Համաձայնագրին: Հայաստանի կառավարությունը Համաձայնագրին միանալու մասին որոշում ընդունեց 94 թվականի հոկտեմբերին, որը անցյալ տարվա նոյեմբերին վավերացվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից: Հայաստանում ստեղծվեց ՄԳՏԿ-ի տարածաշրջանային բաժանմունք:

Ինչպե՞ս է ՄԳՏԿ դրամաշնորհներ ստանալու կարգը: Համապատասխան կազմակերպությունը նախագիծը ներկայացնում է Հայաստանի տարածաշրջանային բաժանմունք, այն ուղարկվում է Կենտրոն և համապատասխան հանձնաժողովի որոշմամբ՝ ֆինանսավորվում է կամ մերժվում:

Մինչև օրս Հայաստանից Կենտրոն է ներկայացվել 92 նախագիծ, որոնցից ոչ բոլորն են պատրաստ փորձագիտական բննարկման: Հաստատվել և ֆինանսավորվում է արդեն 32 նախագիծ՝ ընդհանուր առմամբ մոտ 5 միլիոն ամերիկյան դոլարի չափով (վերջին, երևանյան նիստում Հայաստանին հատկացվեց մեկ միլիոն դոլար):

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի դրամաշնորհները անպայման լուրջ աջակցություն են գիտնականներին, ինստիտուտներին և կազմակերպություններին՝ ինչպես գիտական, տեխնիկական հետազոտությունների իրականացման, այնպես էլ շատ հաստատությունների ինֆրակառուցվածքի, գործուղումների և այլ ծախսերը հոգալու, ինստիտուտների նյութական կարիքների, գիտական կադրերի գոյության ապահովման գործում:

Դրամաշնորհները չհարկվող մաքուր գումարներ են, որոնց նպատակային և խելացի օգտագործումը, անշուշտ, դուրս է նպաստ Հայաստանի գիտության համար: Սակայն, այնուամենայնիվ, այն ընդամենը նպաստ է, աջակցություն, յոլա գնալու միջոց, որը չի կարող լուծել հայ գիտության ֆինանսավորման խնդիրը: Դա արդեն մեր պետության, Հայաստանի կառավարության սուրբ պարտքն է և հուսանք, որ մեր իշխանությունները երբևէ կհասկանան այս նշմարտությունը:

Այժմ վերադառնանք ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի 17-րդ նիստին, որը բննարկեց գլխավորապես Կենտրոնի 1999 թվականի բյուջեն, սպառազինությունները չտարածելու այն հիմնական ուղղությունները, որոնց աջակցելու է Կենտրոնը, և վերանայեց ու կատարելագործեց «Առաջարկությունների պատրաստման հրահանգները» փաստաթուղթը: Նիստը հաստատեց 58 նոր նախագիծ, որից հետո ֆինանսավորվող ծրագրերի թիվը հասավ 651-ի՝ մոտ 190 միլիոն դոլար ընդհանուր գումարով:

ՄԳՏԿ կառավարիչների խորհուրդը անկեղծ շնորհակալություն հայտնեց Հայաստանի Հանրապետությունը՝ ջերմ ընդունելության և աջակցության համար, որը նպաստեց հաջող և արդյունավետ աշխատելու գործին: Հատուկ նշվեց ՄԳՏԿ Հայաստանի տարածաշրջանային բաժանմունքի գործունեությունը, որը տեղավորված է ՀՀ ԳԱԱ նախագահության շենքում:

ՀԵՍԵՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ 30 ՏԱՐԻՆ

Սփյուռքը արմատախիլ անել հնարավոր չէ, սակայն հեռավոր ափերում հայ մնալու, ահագնացող ուծացման պայմաններում զավակներին հայ մեծացնելու, մեր հավատքն ու ավանդույթները պահելու հարցերը շարունակ եղել ու մնում են հայ մտավորականների մտահոգությունը:

Հենց այս նպատակներն են ունեցել մի խումբ հայ նվիրյալ երիտասարդներ, որոնց ջանքերով 1968 թ. հոկտեմբերին Մայնի Ֆրանկֆուրտում հիմնադրվել է Հեսենի հայ մշակութային միությունը (հիմնադիր նախագահ՝ դոկտոր, ճարտարապետ Արա Բերքյան):

Գոյության 30 տարիների ընթացքում մեծ ջանքերի շնորհիվ, միությանը հաջողվել է հայերենի շաբաթօրյա դպրոցի, մշակութային բազմազան միջոցառումների, հայ նշանավոր գործիչների հետ հանդիպումների, բարեսիրական ու գրական երեկոների, ցուցահանդեսների և համերգների միջոցով, համախմբել այս տարածքներում ապրող հայությանը միության շուրջ, նրանց մոտ արթուն պահել մեր ազգային ոգին, մերձեցնել կապը հայրենիքի հետ, ինչպես նաև նպաստել հայ-գերմանական կապերի ամրապնդմանը:

Միության 30-ամյա հոբելյանը նշելու բազմաբովանդակ միջոցառումներ էր նախատեսել վարչությունը:

Հոկտեմբերի առաջին տասնօրյակում Երևանի «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ Միությունը մասնակցեց Ֆրանկֆուրտի ամենամյա գրքի միջազգային տոնավաճառին: Այդ շրջանակներում էլ Ս. Մարկոս եկեղեցու սրահում անցկացվեց գրական երեկո, որին մասնակցեցին «Հայկական սփյուռք» հանրագիտարանի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Խուդավերդյանը, «Նաիրի» հրատարակչության տնօրեն, բանաստեղծ Հրաչյա Թամրազյանը, ամերիկահայ անգլիագիր գրողներ Նենսի Գրիգորյանը, Փիտեր Բոլաքյանը, բանաստեղծ Սևակ Հովհաննիսյանը:

Ֆրանկֆուրտի Դոմինիկյան վանքի մեծ համերգասրահում տեղի ունեցավ հոբելյանական երեկո: Մինչ միջոցառման սկսվելը, հարյուրավոր հայ և գերմանացի հյուրեր մեծ հետաքրքրությամբ դիտեցին ճանաչված նկարիչներ Վան Սողոմոնյանի և Նոնա Գաբրիելյանի «Արդի հայ գեղանկարչությունը» թեմայով ցուցահանդեսը:

Այնուհետև ներկաներին ողջունեց և բացման խոսք ասաց Միության նախագահ Մհեր Բեգլարյանը: Նա նշեց, որ անցած 30 տարիների ընթացքում, Միությունն անցել է կայացման դժվարին ուղի, սակայն հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, կարողացել է հաջողությամբ հետապնդել իր գործունեության գլխավոր նպատակը՝ ազգային մշակութային հիմքի վրա համախմբել Հեսենի երկրամասում ապրող հայության կենսական ուժերը, հայ մանուկների և երիտասարդների շրջանում հայոց լեզուն տարածելը: Այդ կարող է վկայել այն փաստը, որ այսօր Միության պատերից ներս գերիշխում է հայոց բառն ու բանը:

Ողջույնի խոսք ասացին Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպան, դոկտոր Աշոտ Ոսկանյանը, Մայնի Ֆրանկֆուրտի բազմամշակութային գործերի գերատեսչության վարիչ, տիկին Ռոզի Վոլֆ-Ալմանագրենը: Վերջինս նշեց, որ 180 ազգությունների ներկայացուցիչներ են ապրում Մայնի Ֆրանկֆուրտում, դրանցից մի խումբ են հայերը, որոնք թեև ակտիվորեն միաձուլվել են տեղի ներքին կյանքին, այնուամենայնիվ, պահպանում են իրենց ազգային ինքնությունը:

Այնուհետև երաժշտական հարուստ ծրագրով համերգ տվեց Ֆրանկֆուրտում մեծ ճանաչում ձեռք բերած Խաչատրյան ընտանիքը: Համերգի առաջին մասն ընդգրկում էր եվրոպացի կոմպոզիտորների՝ Բախի, Սեն-Սանսի, Շումանի, Լիստի, Ռավելի գործերը: Երկրորդ բաժինն ընդգրկում էր Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Էդվարդ Բաղդասարյանի, Առնո Բաբաջանյանի և Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործությունները: Ազգային հպարտության մեծ զգացում ապրեցին մեր հայրենակիցները ամբողջ համերգի ընթացքում: Սակայն ծնողների վարպետ (զուգանվագ) կատարումներից բացի, առավել փոթորկվում էր դահլիճը տաղանդավոր փոքրիկների՝ 13-ամյա ջութակահար Սերգեյի և 15-ամյա դաշնակահար Լուսինեի ելույթներից հետո:

Համերգն իր արձագանքները գտավ Ֆրանկֆուրտի օրաթերթերում:

Միության 30-ամյակին նվիրված միջոցառումները շարունակվում են:

Լիզա ԲԵՐՔՅԱՆ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գերմանիա, Վիսբադեն

Մոտենում է քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակը: Օգտագործենք այն՝ աշխարհին ներկայացնելու մեր արժեքները:

Անդրադարձ

Եռագույնի պատմականությունը

1918 թ. օգոստոսի 1-ին Հայաստանի խորհրդարանը հաստատեց Առաջին Հանրապետության դրոշը՝ Եռագույնը, կարմիր-կապույտ-նարնջագույն (ոսկի) գույների համադրությամբ:

Առաջին Հանրապետությունը կարճ ժամանակից ընկավ և Եռագույնը փոխարինվեց խորհրդային կարմիր պաստառով: Սակայն, երբ 1990 թ. հռչակվեց Երրորդ Հանրապետությունը, Եռագույնը ստացավ երկրորդ շունչը, այն հաստատվեց որպես պետական դրոշ:

Ներկայումս այսօր արվում են առաջարկներ՝ հրաժարվել նրանից, իբր «ոչ պատմական» լինելու պատճառով:

«Գիտություն» թերթի վերջին համարներից մեկում (№ 16—17) հրապարակված պատմական գիտությունների դոկտոր Վլադիմիր Պետրոսյանը այն միտքն է հայտնում, թե Հայաստանի Հանրապետության ներկայիս դրոշը՝ եռագույնը, որևէ պատմական հիմք չունի, այդպիսի դրոշ մեր հազարամյա պատմության մեջ երբեք չի եղել և այդ պատճառով չի կարող լինել հայ պետականության խորհրդանիշ:

Գրականությունից հայտնի է, որ խորհրդարանը, չնայած որոշ առարկությունների, հաստատել է երեք գույներ՝ կարմիր, կապույտ և նարնջագույն: Վերջինը՝ Հ. Քաջազնունու պնդումով: (Տես այդ մասին Ս. Վրացյանի գրքում՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 190: Վրացյանից օգտվելով գրել է նաև Ց. Ստեփանյանը (Բեյրութ, 1966)՝ «Հայկական դրոշակներ և զինանշաններ», էջ 46-48):

Դրանից ելնելով, Վլ. Պետրոսյանը գրում է, որ գույների ընտրությունը պատահականության արդյունք էր: Մյուս դեպքում գտնում է, որ Եռագույնը ընտրվել է եվրոպական երկրներին նմանվելու համար:

Բայց, այնուամենայնիվ, հարցնում է քննադատը, որտեղի՞ց է առաջացել Եռագույնը և տալիս է պատասխանը: Ժամանակին՝ եռագույն որոշ առաջարկել են Շահամիր Շահամիրյանը «Ոռոգայթ տալասում» (կարմիր, կապույտ, դեղին), ապա 1783 թ. Հովհաննես Լազարյանն ու Հովսեփ Արղությանը, Հայաստանի և Ռուսաստանի «Դաշինքի» հեղինակները, առաջարկել են վերականգնվող հայոց թագավորության գինանշանը (Նոյան տապանով) և դրոշը (երեք ժապավեններ՝ կանաչ, կապույտ և կարմիր):

Այս դեպքում քննադատը նախ պետք է պարզեր՝ ինչպիսի՞ աղբյուրներից էին օգտվել ազատագրական շարժման գործիչները, երբ առաջարկում էին նշված գույները: Չէ՞ որ գույները պատահական չեն առաջարկվել, նրանցից յուրաքանչյուրն ուներ իմաստ և խորհրդանշում էր ինչ-որ գաղափար, ինչպես հիմնավորվել է խորհրդարանում 1918 թ.՝ ժողովրդի թափած արյունը, հայրենիքի երկիրը և աշխատանքը: Միաձուլվելով, նրանք ստեղծում էին հայրենիքի խորհրդանիշը անցյալում, ներկայում և ապագայում:

Եվ, արդյոք, պատահա՞կան էր, որ Միքայել Նալբանդյանը իր բանաստեղծությունում («Իտալացի աղջկա երգը» նույնպես անդրադարձել է եռագույնին: Կամ Ղ. Ալիշանը, որը «Նուագների» Գ հատորում (1867, էջ 7, 200) նույնպես գովերգում է եռագույնը՝ «կարմիր-կանաչ-կապույտ Հայոց»: Գույների ընտրությունը այս դեպքում ևս պատահական լինել չէր կարող, չնայած, Ղ. Ալիշանի աղբյուրները, որոնք նշված են Վարդան Հացունու մենագրությունում, վերջինի կողմից իրավամբ կասկածի տակ են դրվում:

Այսպիսով, մինչև 1920 թ. Եռագույնի գաղափարը արդեն շրջանառության մեջ է եղել առնվազն 1773 թվից: Միշտ է, այն լայն տարածում չի գտել, իսկ նրա ազդեցությունը 1920 թվականին հաստատված Եռագույնի վրա դեռևս ճշտելու կարիք ունի: Սակայն այդպիսի ազդեցություն բացառված չէ:

Ընդ որում Վլ. Պետրոսյանի կարծիքով Մալխասյանը ծանոթ էր Շահամիրյանի և Արղությանի առաջարկներին, որոնք ծառայել են նրան որպես հիմնավորում: Բայց եթե այդպես է, ուրեմն գույների ընտրությունը 1918 թ. ոչ թե պատահականության արդյունք էր, այլ ընտրության և քննարկման:

Այս բոլորից հետո Պետրոսյանը նորից կրկնում է, որ Հայոց պատմության մեջ եռագույն դրոշ երբեք գոյություն չի ունեցել, նկատի ունենալով ոչ միայն նոր-նորագույն, այլև հին դարաշրջանները: Խորհրդարանը ստեղծել է նոր դրոշ,— գրում է նա,— կարծես հայ ժողովուրդը անցյալում պետականություն չի ունեցել: Այնինչ, պետք էր ուշադրությամբ վերաբերվել հայ ժողովրդի պատմությանը, հաշվի առնել, որ վերականգնվում է 1600 տարվա պետականության դրոշը:

Այս դիտողությունը երբեմն պետք է սկզբունքորեն առարկենք.

Նախ՝ նման խիստ դիտողություն անելու համար, բացի Մալխասյանի զեկուցմանը ծանոթ լինելուց, անհրաժեշտ է քաջածանոթ լինել 1600-ամյա պետականության սիմվոլիկային, այդ թվում և դրոշին:

Ճիշտ է, Պետրոսյանը ինքը լավ գիտակցում է այդ հանգամանքը և գրում է՝ «նախ պարզենք, թե ինչպիսին են եղել պատմական Հայաստանի դրոշները (պետք է լինի՝ Հայաստանի պատմական դրոշները): Դիմենք Հայոց դրոշների պատմությանը՝ խորապես և բազմակողմանի ուսումնասիրող և անվիճելի հեղինակություն Վ. Հացունուն»: Պետրոսյանը նկատի ունի Վենետիկի Մխիթարյան Վարդան վարդապետ Հացունու աշխատությունը «Հայ դրօշները պատմութեան մէջ», Վենետիկ, 1919, (երկրորդ հրատարակություն, 1930 թ.): Սույն ուսումնասիրության մեջ Հացունին քննություն է կատարել հայ դրոշների շուրջ՝ սկսած հնագույն ժամանակներից մինչ XX դ., զուգահեռաբար քննելով նաև հայկական թագավորությունների և մասամբ իշխանական տների զինանշանները:

Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում են հին և միջնադարյան շրջանները:

Հացունին Հայաստանի հին՝ Արտաշեսյան և միջնադարյան՝ Արշակունիների (այս երկուսին Հացունին սխալմամբ նույնացնում է) և Բագրատունիների դրոշները համարում է ծիրանագույնը: (Նշված աշխատ., էջ 17, 18, 33—34):

Ռուբինյանները Կիլիկիայում, հավատարիմ նախնյաց ժառանգությանը, նույնպես խորհրդանիշ դարձրին ծիրանագույն դրոշը, գտնում է Պետրոսյանը, վկայակոչելով Հացունու միտքը, որ Ռուբինյանների զգեստի արքունական գույնն էր ավանդական ծիրանին (Վ. Հացունի, էջ 38): Այսպիսով, եզրակացնում է Վլ. Պետրոսյանը, մ.թ.ա. 2-րդ դարից (այսինքն Արտաշես Ա-ից սկսած (189—160 թթ. թ.թ.ա.) մինչև 14-րդ դարը (1375 թ., այն է՝ Կիլիկիայի թագավորության անկումը), շուրջ 1600 տարի հայ պետականության խորհրդանիշը եղել է ծիրանագույն դրոշը:

Այժմ մենք, շարունակում է Պետրոսյանը, պարտավոր ենք սկսել մեր ժողովրդի պետականության ակունքներից, նրա արմատներից և հանում հայ ժողովրդի պետականության հաջորդականության վերականգնել ծիրանագույն դրոշը, «որպես մեր միակ և օրինական ազգային պետականության խորհրդանիշ»:

Այս առաջարկի և հարցադրման կապակցությամբ պետք է ասել հետևյալը:

Նախ՝ պարզ երևում է, որ Վ. Պետրոսյանն ինքնուրույն ուսումնասիրություն չի կատարել, այլ օգտվել է Վ. Հացունու աշխատությունից, անվերապահ ընդունելով նրա տեսակետները: Բնականաբար, կրկնվել են նրա ճիշտ կամ սխալ եզրակացությունները: Բայց պետք է հաշվի առնել, որ Հացունու աշխատության լույս ընծայումից անցել է 80 տարի, այդ ժամանակաշրջանում լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք հսկայական նոր նյութեր են պարունակում և հնարավորություն ընձեռում նորովի, ամբողջական պատմաբանի համար: Նկատի ունենք Բ. Առաքելյանի, Լ. Ազարյանի, Ստ. Մնացականյանի, Աա. Մնացականյանի, Տ. Իզմայլովայի, Խ. Մուշեղյանի, Զ. Պտուկյանի մենագրությունները: Բացի այդ, ուսումնասիրողը ինքը պետք է ծանոթ լինի քանդակներին, մանրանկարներին, այցելի հուշարձանները և այլ, նոր ձեռնամուխ լինի ինքնուրույն հետազոտությանը: Այս կարճ ներածական խոսքից հետո սույն հոդվածում արծարծվող հարցի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալը.

1. Արտաշեսյանների դրոշի, նրա գույների կամ գույնի մասին այսօր որևէ հստակ կարծիք հայտնել հնարավոր չէ: Հացունին այն համարում է ծիրանագույն, բայց պետք է պարզաբանել երկու խնդիր:

Ա. Ծիրանագույնը գործնականում եղել է բոլոր երկրների թագավորական գույնը, այդ թվում և Հայաստանի: Բայց բացի ծիրանագույնից, Արտաշեսյանները, անկասկած կօգտագործեին նաև այլ գույներ, որոնք դեռևս հայտնի չեն:

Բ. Պետք է ճշտել, ո՞ր գույնը նկատի ունենք, ասելով «ծիրանի», «ծիրանագույն»: Ծիրանին բազմագույն է, այն կարող է լինել ծիրանի (ոսկի, նարնջագույն), կապույտ, մանուշակագույն, կարմիր, կարմիր-սև, և այլ երանգների (տես՝ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հ. 1, էջ 1017): Նշելով այդ փաստը, Վ. Հացունին նախապատվությունը տալիս է մանուշակագույնին, բացի այդ, ծիրանին, ըստ իրեն, ուներ հակում դեպի աղոտ Կարմիր:

Այսպիսով, Արտաշեսյանների ծիրանին շատ անորոշ է, այն պահանջում է ավելի հրատակ տվյալներ, որոնք այսօր բացակայում են: Իսկ քանի որ Հացունին Արտաշեսյաններին նույնացնում է Արշակունիների հետ, նույնացնում է նաև նրանց նշանները, իսկ դրոշները համարում է միմյանց շարունակությունը, այն է՝ ծիրանի: (Նշված աշխատ., էջ 17): Այսպիսով, Հացունու մոտ Արտաշեսյանների դրոշը որոշված է սխալ:

2. Արշակունյաց դրոշն ու զինանշանը ևս որոշված են սխալ (ընդ որում Արշակունիների զինանշանը հնարավոր չէ որոշել առանց Աղցի Արշակունյաց դամբարանի և Էջմիածնի Մայր տաճարի քանդակների, որոնց Հացունին հաշվի չի առել):

Արդեն ասվեց, որ

Հրանտ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ակադեմիկոս

Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս ամերիկյան մանդատի հարցի շուրջ. 1919-20 թթ.

Պատմության դասերը վկայում են, որ Հայաստանի և ընդհանրապես Կովկասի նկատմամբ տերությունների վերաբերմունքը որոշվել և զարգացել է Ռուսական կայսրության վերելքի և թուլացման, տարածաշրջանում և հարակից երկրներում նրանց հետաքրքրությունների խաչաձևման, աշխարհաքաղաքական և ռազմավարական նկրտումների, ազդեցության ոլորտների նոր բաժանման ելևէջներով:

1917 թ. գարնանն Ամերիկայի Միացյալ Նահանգները մտնելով առաջին համաշխարհային պատերազմի մեջ՝ գերմանական խմբավորման դեմ, մինչև աշխարհամարտի ավարտը չեզոքություն պահպանեց Թուրքիայի հանդեպ: Այդ չեզոքությունը խաղաց իր չարաղետ դերը Հայկական հարցում:

Պատերազմում ԱՄՆ-ի հանդես գալը, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի՝ ճնշված և փոքր ազգերի քաղաքական իրավունքների սատարման մասին հայտարարությունները, սակայն, ըստ հայ քաղաքական շրջանների կարծիքի, «նպաստավոր պայմաններ ստեղծեցին Հայկական դատի և հարցի լուծման համար»:

1917 թ. ապրիլի սկզբներին Հայոց կենտրոնական ազգային բյուրոն ընդունեց որոշում թուրքահայ հայտնի գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ Գարեգին Բաստրմաջյանին (Արմեն Գարո) հատուկ առաքելությամբ՝ «թե՛ կառավարական և թե՛ հասարակական շրջաններում Հայկական դատը պրոպագանդելու և կազմակերպելու համար», Ամերիկա գործուղելու մասին:

Այդ որոշումը պաշտպանեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը, իր հատուկ գրություններով:

Բաստրմաջյանի առաքելությունն ԱՄՆ նպատակահարմար գտան և Պետրոգրադում, ուր ժամանեց Արմեն Գարոն: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում համարում էին, որ միայն ԱՄՆ-ը կկարողանար չեզոքացնել ֆրանսիական ծրագրերը Կիլիկիայի նկատմամբ:

Տեղեկացնելով վեհափառին պետրոգրադյան հանդիպումների մասին, մայիսի 10-ին, Բաստրմաջյանը հաղորդում էր և ռուսական մոտեցումները Հայկական հարցին. «Բուն Հայաստանը՝ 6 վիլայեթներ և Կիլիկիան միասին կազմելու են մի ինքնավար քաղաքական միավոր, որը բոլոր պետությունների համաձայնությամբ կդրվի ռուսական պաշտպանության տակ»:

Տերությունների քաղաքականության մեջ էական շրջումներ մտցրեցին Հոկտեմբերյան հեղափոխությունը և Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը: 1917 թ. դեկտեմբերի 23-ի՝ Ռուսաստանում «ազդեցության գոտիների» բաժանման ֆրանս-անգլիական համաձայնագրով Կովկասը և Ռուսաստանի հարավ-արևելյան մասը մտցվեց անգլիական հետաքրքրությունների շրջանակների մեջ, մի փոքր ուշ՝ նաև Թուրքեստանյան երկրամասը:

Ռուսաստանի ժողովրդական դեկտեմբերի 29-ի հրովարտակով խորհրդային կառավարությունը հանդես եկավ ռուսական զորքերի կողմից զինագրավված Արևմտյան Հայաստանի հայերի ազատ ինքնորոշման, լիակատար անկախության, հայկական պետականության ստեղծման առաջարկությամբ:

Նույն օրերին Հայկական հարցն արծարծվեց ԱՄՆ-ի կոնգրեսում՝ Վուդրո Վիլսոնի՝ «Համընդհանուր հաշտության մասին» ճառում և Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի՝ Համայնքների պալատում ունեցած ելույթում: «Պետք է հայտարարվի Արաբիայի, Հայաստանի և Միջագետքի ազգային անկախությունը»,— հայտարարեց Լլոյդ Ջորջը:

Վիլսոնի հռչակած «14 կետերով» ի թիվս այլ հարցերի, նախատեսված էր Ավստրո-Հունգարական և Օսմանյան կայսրություններում բնակվող ոչ թուրք ժողովուրդների ինքնավարություն: Օսմանյան կայսրության տաճկական մասերը պետք է ըստանային «ապահովված և հաստատուն իշխանություն», իսկ թուրքերի իշխանության ներքո գտնվող մյուս ազգերը՝ «իրենց գոյության աներկրա երաշխիքի և ինքնուրույն զարգացման բացարձակորեն անխախտելի պայմաններ»:

Մինչ այդ, ԱՄՆ-ի նախագահը, ըստ գնդապետ Հաուզի վկայության, գտնում էր, որ «Թուրքիան պետք է ջնջվի որպես պետություն և նրա բախտի տնօրինումը պետք է դրվի խաղաղության կոնֆերանսի վրա»:

Վիլսոնի մտքերն ավելի հստակեցվեցին 1918 թ. հոկտեմբերի 14-ին հրապարակված «14 կետերի» մեկնաբանություններում: Այն է. «Կովկասը, հավանաբար, պետք է դիտել որպես թուրքական կայսրության հիմնահարցի մաս. Անատոլիան պետք է թողնել Թուրքիային»:

Վիլսոնը դրանով ճանաչում է մեր տարածքային ամբողջականությունը, և չի ճանաչում օտարների անհիմն պահանջները՝ այս նույն երկրի նկատմամբ: Վիլսոնի ծրագրի 12-րդ հոդվածը մեկընդմիշտ մերժում է Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի պահանջները, որոնք «իրենց մեջ արդեն բաժանել են Անատոլիան»: Վիլսոնի ծրագրով «Հայկական հարցը հին պատմություն է դարձել»,— տարփողում էին պանթուրքական գաղափարախոսները:

Մուդրոսի հաշտությունից հետո էլ (1918 թ. հոկտեմբերի 30) պարտված Թուրքիան չէր հրաժարվում իր համապետական ծրագրից: Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար գնդապետ Շարդինեի վրկայությամբ, «հենվելով կրոնի վրա, թուրքերը նախատեսել են լեռնականների միությունն և Ադրբեջանի, Էրզրումի և Թուրքեստանի միավորումը»: Պանթուրքական շարժումը բնորոշվում էր թուրք-մահմեդական ազգայնական և կրոնական շարժում, որի նպատակը կապն է ցեղերի արմատների հետ, կայսրության քաղաքական սահմանների ընդարձակումը պանթուրքական շարժման՝ դեպի Թուրքեստան, Հնդկաստան, Չինաստան տանող ճանապարհի միակ պատնեշին՝ Արևելյան Հայաստանին տիրելը:

Մինչ այդ Բրեստի աղետաբեր պայմանագրով՝ Գերմանիայի ճնշմամբ, Խորհրդային Ռուսաստանի թողտվությամբ «արևելաանատոլիական գավառներ» անվան տակ Թուրքիային էր անցել Արևմտյան Հայաստանը. թուրքերը բընդարձակվել էին նաև Կարսի մարզը: Ամերիկյան ճանաչված քաղաքական և պետական գործիչ Լոջը 1918 թ. դեկտեմբերի 20-ին սենատի քննարկմանը ներկայացրեց բանաձև՝ անկախ Հայաստանի ստեղծման մասին: Այն ներառելու էր ոչ միայն թուրքական, ռուսական, պարսկական Հայաստանը, այլև Կիլիկիան: Ամերիկյան միասնական մանդատը տարածվելու էր նաև Հայաստանի վրա: Նախագիծն արժանացավ սենատի շատ ճանաչված անդամների հավանությանը:

Մանդատի գաղափարը 1919 թվականի հունվար ամսվա ընթացքում քննարկվեց Փարիզի հաշտության վեհաժողովի անգլիական և ամերիկյան պատվիրակությունների անդամների հանդիպումներում: Հունվարի 29-ին անգլիական պատվիրակությունը ներկայացրեց նախագիծ՝ Օսմանյան կայսրությունից Հայաստանի լրիվ անջատման մասին:

Հայաստանի բարեհաջողությունը և զարգացումը համարվեց «քաղաքակրթության սրբազան պարտքը»: Լլոյդ Ջորջը առաջարկեց Վիլսոնին՝ որպեսզի ԱՄՆ-ը վերցնի Հայաստանի մանդատը: Լորդ Միլների կարծիքով «Հայաստանը գտնվելով ԱՄՆ-ի ձեռքերում, Բրիտանական կայսրությանը կծառայի ամրոց»:

Նույն օրը, հունվարի 29-ին Վիլսոնը պահանջեց ընդունել մանդատակրի համակարգ թուրքական կայսրության բոլոր զավթած հողերի և գերմանական գաղութների համար: Հունվարի 30-ին վեհաժողովի 10-ի խորհուրդն ընդունեց բրիտանական պատվիրակության առաջարկած բանաձևը, որով տերությունները համաձայնվեցին, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան պետք է անջատվեն Թուրքական կայսրությունից և անցնեն մանդատի տակ:

Այդ օրը վեհաժողովում առաջին անգամ պաշտոնապես դրվեց նշված երկրների ընկատմամբ Ամերիկայի՝ որպես մանդատակրի պատրաստության հարցը: Վ. Վիլսոնը դիվանագիտորեն պատասխանեց. «Իր երկիրը կարող է ընդունել նման պատասխանատվություն, սակայն Ամերիկայի ժողովուրդը բոլորովին չի ցանկանում այդ անել»: Նախագահն ակնարկեց, որ բացառություն կարելի է անել միայն Հայաստանի համար:

Սակայն, հայտարարելով, որ ԱՄՆ-ը չի եղել պատերազմի մեջ Թուրքիայի հետ, Վիլսոնը հրաժարվեց տրամադրել զինագրավող ուժեր:

Վեհաժողովի նիստերում և աշխատանքային հանձնաժողովներում 1919 թ. փետրվար-մայիս ամիսներին մանդատի հարցի քննարկման ժամանակ ատիճանաբար հստակեցվեցին և գծագրվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի դիրքորոշումները և հակասությունները: Մարտի 5-ին և 7-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի և ամերիկյան գնդապետ Հաուզի հետ հանդիպման ժամանակ Լլոյդ Ջորջը կրկին առաջ քաշեց Կոստանդնուպոլիսի և Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատի հարցը: Խոսելով Սիրիայի և Հայաստանի, «նույնիսկ Բաքվի նավթահանքերի» նկատմամբ անգլիական նկրտումների բացակայության մասին, Լլոյդ Ջորջը բազմանշանակալից հայտարարեց. «Բայց ինչ-որ մեկը պետք է այնտեղ մնա հայերի պաշտպանության համար»:

Այդ ժամանակ Անդրկովկասի կարևոր ռազմավարական կետերում՝ Բաթումից մինչև Բաքու, գտնվում էր անգլիական 47 հազարանոց բանակը: Անգլիական զորքերի թիվը Մերձավոր Արևելքում հասնում էր 400 հազարի:

Վ. Վիլսոնի բացասական արձագանքն առաջացրեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Պիշոնի մարտի 20-ի պահանջը՝ Սիրիայի և Կիլիկիայի նկատմամբ: «Կիլիկիան կտրում է Հայաստանը Միջերկրական ծովից, և եթե մի պետություն ստանա Հայաստանի հարավային, իսկ մյուսը՝ հյուսիսային մասի մանդատը, դա կառաջացնի մեծ ճեղքվածք՝ հաշվի առնելով հարավի բնակչության անհանգիստ բնույթը»: Այսպիսին էր ԱՄՆ-ի նախագահի կարծիքը:

Ապրիլի 14-ին Պիշոնը հայտնեց Հաուզին, որ Հայաստանի մանդատը վերցնելու դեպքում Ֆրանսիան ԱՄՆ-ին կգիջի Կիլիկիան՝ առանց Ալեքսանդրետի:

Հայաստանի մանդատը վերցնելու ամերիկյան մտադրության մասին Փարիզի հաշտության վեհաժողովում Վիլսոնը Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Aհարոնյանին և Հայկական ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին հայտնեց 1919 թ. ապրիլի 17-ին: Մայիսի 13—14-ին Չորսի խորհուրդ՝ Վիլսոն, Լլոյդ Ջորջ, Կլեմանսո, Օրլանդո (Իտալիայի վարչապետ) որոշեց. «Թուրքիային վտարում են Եվրոպայից և Հայաստանից: Միացյալ Նահանգներն ստանում է Հաղաստանի և Կոստանդնուպոլսի մանդատը»:

Մայիսի 28-ին անգլիական պատվիրակության առաջարկությամբ ավելի ընդարձակվեցին ամերիկյան միասնական մանդատի սահմանները: Ամերիկան ստանում էր մանդատ թուրքական կայսրության նկատմամբ, ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում, ներառյալ Սիրիան, սակայն առանց Միջագետքի և Պաղեստինի: Հենց այդ շրջաններն էին, որ ամենից ցանկալի էին ԱՄՆ-ին: «Անգլիացիները և ֆրանսիացիները մայիսի կեսերին Թուրքիան բաժանելու որոշում կայացրին և գնացին Ամերիկայի կողմից Հայաստանի և Դարդանելի մանդատ վերցնելու գաղափարը,— գրում է Հերբերտ Հուվերը «Ամերիկյան առաջին խաչակրաց արշավանքը» գրքում: Այս նոր միավորումը պետք է ընդգրկեր թուրքական, պարսկական և ռուսական Հայաստանը, ամբողջ պատմական Հայաստանի թագավորության հողերը, որը ներառում էր Արևելյան Թուրքիայում բնակվող շատ ժողովուրդների ընդարձակ տարածքներ: Այն պետք է ընդգրկեր նաև Կոստանդնուպոլիսը և Դարդանելը: Նախագահ Վիլսոնին այդ միտքը դուր էր եկել: «Ես այդ մասին իմացա, երբ գնդապետ Հաուզն ինձ ասաց, որ պետք է նշանակվեմ նահանգապետ»:

Միասնական մանդատի գաղափարը դուր էր եկել նաև թուրքական ազգայնականներին՝ այսինքն Մուստաֆա Քեմալին և իր շրջապատին:

«Թուրքական ազգայնականները կողջունեին ամերիկյան մանդատը, եթե դա լիներ մանդատ ամբողջ Թուրքիայի հանդուցեց բրիտանական պատվիրակության առաջարկած բանաձևը, որով տերությունները համաձայնվեցին, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան պետք է անջատվեն Թուրքական կայսրությունից և անցնեն մանդատի տակ:

Այդ օրը վեհաժողովում առաջին անգամ պաշտոնապես դրվեց նշված երկրների ընկատմամբ Ամերիկայի՝ որպես մանդատակրի պատրաստության հարցը: Վ. Վիլսոնը դիվանագիտորեն պատասխանեց. «Իր երկիրը կարող է ընդունել նման պատասխանատվություն, սակայն Ամերիկայի ժողովուրդը բոլորովին չի ցանկանում այդ անել»: Նախագահն ակնարկեց, որ բացառություն կարելի է անել միայն Հայաստանի համար:

Սակայն, հայտարարելով, որ ԱՄՆ-ը չի եղել պատերազմի մեջ Թուրքիայի հետ, Վիլսոնը հրաժարվեց տրամադրել զինագրավող ուժեր:

Վեհաժողովի նիստերում և աշխատանքային հանձնաժողովներում 1919 թ. փետրվար-մայիս ամիսներին մանդատի հարցի քննարկման ժամանակ ատիճանաբար հստակեցվեցին և գծագրվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի դիրքորոշումները և հակասությունները: Մարտի 5-ին և 7-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի և ամերիկյան գնդապետ Հաուզի հետ հանդիպման ժամանակ Լլոյդ Ջորջը կրկին առաջ քաշեց Կոստանդնուպոլիսի և Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատի հարցը: Խոսելով Սիրիայի և Հայաստանի, «նույնիսկ Բաքվի նավթահանքերի» նկատմամբ անգլիական նկրտումների բացակայության մասին, Լլոյդ Ջորջը բազմանշանակալից հայտարարեց. «Բայց ինչ-որ մեկը պետք է այնտեղ մնա հայերի պաշտպանության համար»:

Այդ ժամանակ Անդրկովկասի կարևոր ռազմավարական կետերում՝ Բաթումից մինչև Բաքու, գտնվում էր անգլիական 47 հազարանոց բանակը: Անգլիական զորքերի թիվը Մերձավոր Արևելքում հասնում էր 400 հազարի:

Վ. Վիլսոնի բացասական արձագանքն առաջացրեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Պիշոնի մարտի 20-ի պահանջը՝ Սիրիայի և Կիլիկիայի նկատմամբ: «Կիլիկիան կտրում է Հայաստանը Միջերկրական ծովից, և եթե մի պետություն ստանա Հայաստանի հարավային, իսկ մյուսը՝ հյուսիսային մասի մանդատը, դա կառաջացնի մեծ ճեղքվածք՝ հաշվի առնելով հարավի բնակչության անհանգիստ բնույթը»: Այսպիսին էր ԱՄՆ-ի նախագահի կարծիքը:

Ապրիլի 14-ին Պիշոնը հայտնեց Հաուզին, որ Հայաստանի մանդատը վերցնելու դեպքում Ֆրանսիան ԱՄՆ-ին կգիջի Կիլիկիան՝ առանց Ալեքսանդրետի:

Հայաստանի մանդատը վերցնելու ամերիկյան մտադրության մասին Փարիզի հաշտության վեհաժողովում Վիլսոնը Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Aհարոնյանին և Հայկական ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին հայտնեց 1919 թ. ապրիլի 17-ին: Մայիսի 13—14-ին Չորսի խորհուրդ՝ Վիլսոն, Լլոյդ Ջորջ, Կլեմանսո, Օրլանդո (Իտալիայի վարչապետ) որոշեց. «Թուրքիային վտարում են Եվրոպայից և Հայաստանից: Միացյալ Նահանգներն ստանում է Հաղաստանի և Կոստանդնուպոլսի մանդատը»:

Մայիսի 28-ին անգլիական պատվիրակության առաջարկությամբ ավելի ընդարձակվեցին ամերիկյան միասնական մանդատի սահմանները: Ամերիկան ստանում էր մանդատ թուրքական կայսրության ըն

Բնագույն քարերը բնության հրաշալիքներից են

Այսօր երկրի վրա գիտականներին հայտնի են մոտ 700 տեսակի լեռնային ապարներ և 2000-ից ավելի հանքատեսակներ, որոնցից մոտ 230-ը բնագույն քարերն են:

Բնագույն քարերը, ոսկու և արծաթի հետ միասին, միշտ էլ հիացմունք են պատճառել մարդուն: Գեղեցիկ տեսքը, կարծրությունը և հազվագյուտ գունային երանգները նպաստել են, որ բնագույն քարերն իրենց արժանի և հիմնավոր տեղը գրավեն զարդերի մեջ: Իսկ նրանց երբեմն անհասկանալի գունային և լուսային էֆեկտները, արտասովոր ուրակները, համարվել են «կախարդիչ» և ծնել են զանազան սնոտի հավատալիքներ:

Պրոֆեսոր Ե. Յա. Կիևլենկոն (1973) բնագույն քարերը՝ շուկայական գնից և օգտագործման բնագավառից ելնելով, դասակարգել է երկու հիմնական խմբում.

1. Ոսկերչական թանկարժեք քարեր:
2. Ոսկերչական կիսաթանկարժեք քարեր:

Առաջին խմբի քարերը իրենց հերթին ստորաբաժանվել են չորս ենթախմբերի.

Ա) ալմաստ, զմրուխտ, սուտակ (ռուբին), կապույտ շափյուղա (սապֆիր),

Բ) ոսկեբյուրեղ (ալեքսանդրիտ), «ազնվազարմ» (նրբագեղ) ժադեիտ, նարընջագույն, դեղին, մանուշակագույն և կանաչ շափյուղա, «ազնվազարմ» սև օպալ,

Գ) դեմանտոիդ, շպինել, «ազնվազարմ» սպիտակ և հրակարմիր օպալ, ծովակն (ակվամարին), տպագիոն (տոպազ), ռոդոնիտ, լուսնաքար (ադուլյար), կարմիր տուրմալին,

Դ) կապույտ, կանաչ, վարդագույն և բազմաբլոր տուրմալին, «ազնվազարմ» սպոդումեն (կունցիտ), գիդդենիտ, ցիրկոն, դեղին, կանաչ, ոսկեգույն և վարդագույն բերիլ, փիրուզ, ամետիստ, խրիզոպրազ, սիրոպ, ալմանդին, ցիտրին:

Երկրորդ խմբի քարերը ստորաբաժանվել են երկու ենթախմբերի.

ա) լազուրիտ, սաթ, լեռնային բյուրեղապակի, ժադեիտ, նեֆրիտ, մալախիտ, ավանտյուրին,

բ) ագատ, գունավոր քաղքեդոն (խալցեդոն), կախոլոնգ, ամազոնիտ, հեմատիտարյունաներկ, ռոդոնիտ, հելիոտրոպ, վարդագույն կվարց, օբսիդիան, լաբրադոր, ջրագրոսուլյար:

Դեկորատիվ նպատակների համար օգտագործվող բնագույն քարերը ստորաբաժանվում են. երեսապատման և բնագույն դասերի: Երեսապատման քարերը տիրապետում են հատուկ ֆիզիկա-մեխանիկական հատկությունների՝ ամրության, կարծրության, միաձուլության, երկարակեցության և այլն: Նրանք ենթակա են կտրման ու հղկման և ունեն գեղեցիկ ու կայուն գույն: Բնագույն քարերը ունեն վառ և կայուն գույն, թափանցիկություն, փայլ, լուսային «խաղ»՝ լույսը բեկող և ցրող հատկություն, կարծրություն, քիմիական կայունություն և այլն: Այս քարերը հղկումից և «եզրավորումից» հետո պիտանի են դառնում ոսկերչական և դեկորատիվ զարդերի պատրաստման համար:

ԲՆԱԳՈՒՅՆ ՔԱՐԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Շատ հին ժամանակներում մարդիկ բնագույն քարերին վերագրում էին արտասովոր հատկություններ, հավատում էին դրանց հրաշագործ ուժին: Ենթադրում էին, որ գունավոր քարերը մարդկանց կարող են բերել երջանկություն, օգնել սիրո մեջ, առևտրում, որսի ժամանակ, պահպանել երկրաշարժից, նավավթարից և այլ տարերային աղետներից: Դ. Ն. Մամին-Սիբիրյակը (1890) իր «Սամոցվետներ» պատմվածքում գրել է. «Գունավոր քարը, որը ծիածանի տարբեր գույներ է սփռում, մարդուն թվացել է այն կաթիլը, որը իր մեջ է խտացրել հարավային բնության լավ գույները, երկնքի խոր կապույտը և արեգակի տաք ցոլքը... Գունավոր քարը հանդիսանում է ինչ-որ խորհրդավոր առարկա, որի շուրջը հյուսվել է առասպելների խիտ զանց, որը հասել է մինչև մեր օրերը»:

Մեզ են հասել լուրեր, որ կարմիր գույնի քարերը՝ սերդոլիկը, հեմաթիտը, հելիոտրոպը և այլն, դադարեցնում են արնահոսությունը, դեղին քարերը՝ բուժում են դեղնախտը, կանաչ քարերը՝ ամրացնում են տեսողությունը: Որպեսզի չթվարկենք գունավոր քարերին վերագրված բոլոր հրաշագործ հատկությունները, նշենք, որ գունավոր քարերի մեջ չի եղել մեկը, որին վերագրված չլիներ ինչ որ հրաշագործ հատկություն, կամ այն համարված չլիներ դեղամիջոց ինչ որ հիվանդության դեմ՝ թեթևակի թուլության զգացողությունից ու գլխացավից մինչև քաղցկեղը:

Պահպանվել է հունարեն տեքստը (մ.թ.ա. 4-րդ դ.) որտեղ թվարկվում են նավաստիների համայիլ-քարերը՝ նոնաքար (գրանատ), քաղքեդոն (խալցեդոն), լեռնային բյուրեղապակի, ակվամարին, ագաթ, կորալ և այլն: Դրանցից յուրաքանչյուրը պահպանում էր քամուց և ալիքից, փրկում էր ծովասույզ լինելուց: Կենցաղային անհաջողություններից զերծ մնալու և լիարժեք երջանկության համար հաճախ հարկ է եղել կրել գունավոր քարերի մի ամբողջ հավաքածու: Այսպես, օրինակ, միջին դարերում համարվում էր, որ բերիլը մարդուն դարձնում է մարդամոտ և ուրախ, ընդ որում՝ այս հատկությունները փոխանցվում են ժառանգաբար.

Քաղքեդոնը օգնում է հայցվորին շահել դատավարությունը, գիացինտը՝ վերացնում է գերհոգնածությունը և հաջողություն է բերում առևտրական գործերում, մալախիտը՝ հեռացնում է չարիքը, ագաթը՝ պաշտպանում է վտանգներից և երկարացնում է կյանքը, օձաքարը (սերպենտին)՝ փրկում է թունավոր օձերի խայթումից, խրիզոլիտը՝ բուժում է ընկնավորությունից և ցրում է գիշերային վախը, դեղնականաչ շափյուղան՝ անաղարտ մաքրության և օրիորդ լինելու նշան է, օգնում է տիրանալ սիրուն և պահպանում է նախանձից:

Բնագույն քարերից յուրաքանչյուրն ունի իր սիմվոլիկան, իսկ դրանցից որոշները իբր կարող էին կանխարգելել կարկուտը, մյուսները՝ փրկել կյանքը երկրաշարժի ժամանակ, երրորդները՝ հայտնաբերել թույնը և այլն. Հնդկաստանում պիրիտը երկար ժամանակ օգտագործվում էր որպես միջոց կոկորդիլոսների հարձակումների դեմ: Թանկարժեք քարերին ընդհանրապես վերագրվում էին հրաշագործ հատկություններ: Բժիշկների մի մասը խորհուրդ էր տալիս դրանք խմել որոշակի հիվանդություններ բուժելու նպատակով: Մյուսները՝ ներշնչում էին իրենց, որ բավական է կրել այդ քարերը մատանու, հմայիլի և այլնի վրա և դրանցից իրենց օրգանիզմի վրա հրաշագործ ազդեցություններ էին սպասում:

Փիրուզը սիրո և հավատարմության քար է, որը, իբր, կարող է հաշտեցնել վիճող ամուսիններին: Պարսիկ մեծ պոետ և մտածող Սաադին (1203—1292) գրել է.

Խունանում է
սիրահարվածների
փիրուզը
Երբ անցնում է նրանց սերը:

Գտնում էին, որ փիրուզը լինում է պատահական հասակի, հասունացած, հիվանդ և մինչև անգամ մեռնող: Անգլիայի թագուհի Էլիզավետ 1-ինի սուրհանդակ Ջերոմ Գորսելը իր «Ճանապարհորդությունների» (1554) մեջ Ռուսաստանում Իվան Ահեղի հետ հանդիպման վերաբերյալ գրում է, որ թագավորը գանգատվելով իր առողջությունից, ասել է. «Նայեցեք իմ փիրուզին և վերցրեք այն ձեր ձեռքը: Նա ինչպես միշտ կմնա վառ: Բայց տեսեք թե ինչպես է նա խունանում, երբ դնում եմ իմ ձեռքի վրա: Ես վարակված եմ հիվանդությամբ և այդ պատճառով էլ փիրուզը կորցնում է իր գույնը: Նա կանխատեսում է իմ մահը»: Հետաքրքիրն այն է, որ այս երկնագույն քարի վերաբերյալ հորինված առասպելներում կա ճշմարտության մի փոքրիկ մասնիկ: Փիրուզը պղնձի և ալյումինիումի բավականին անկայուն ջրային երկֆոսֆատն է, որը հեշտությամբ իր ծակոտիների մեջ է կլանում զանազան ճարպեր, մաշկի քրտնաթորանքը, օճառը փրփուրը, բուրավետ յուղերը, օդի ածխաթթու գազը, լույսի ու ջերմության ազդեցության ներքո կորցնում է իրեն բնորոշ երկնակապույտ գույնը: Օդի ջերմաստիճանից և խոնավությունից կախված, փիրուզը կարող է չորանալ, խունանալ, վերափոխվել կանաչավուն գույնի այլ միացության:

Մեծ Գյոթեն գրել է. «Գույները, ընդհանրապես, մարդկանց մեջ մեծ ուրախություն են արթնացնում: Աչքը դրանց կարիքը ունի այնպես, ինչպես լույսի կարիքը: Հիշեք, թե ինչպես ենք մենք աշխուժանում, երբ ամպամած օրը արեգակը հանկարծ լուսավորում է տեղանքի մի մասը և գույներն ավելի վառ են դառնում: Չարտահայտված հիացմունքի այս խորը զգացողությունից է, հավանաբար, ծնվել այն պատկերացումը, որ գունավոր թանկարժեք քարերը տիրապետում են բուժիչ հատկություններին»:

Ընդամենը երկու-երեք տասնամյակներ սրանից առաջ գիտությունը կտրականապես հերքում էր գունավոր քարերի «կախարդիչ» հատկությունների վերաբերյալ պատկերացումը: Սակայն իրականությունն այն է, որ ժամանակակից դեղագործությունը մի քանի տասնյակ միներալային նյութեր օգտագործում է մի շարք հիվանդությունների բուժման համար: Աշխարհի մի շարք երկրներում, այդ թվում նաև ԱՊՀ, դեղագործության մեջ այժմ օգտագործվում են ավելի քան 80 հանքատեսակներ (միներալներ):

Հայաստանում կան՝ արդեն իսկ հայտնաբերված են, թանկարժեք և բնագույն քարերի բազմաթիվ ու բազմապիսի հանքավայր-հանքատեղեակումներ, որոնց մեծ մասը դեռևս հետախուզված չէ: Հայաստանի ընդերքի երկրաբանական կառուցվածքը թույլ է տալիս կանխատեսումներ անել նաև թանկարժեք քարերի արդյունաբերական կուտակումներ հայտնաբերելու հնարավորությունների մասին:

Ինձ թվում է, որ եթե անտեսենք մի քանի տասնյակ տարիների ուշացումը, արդեն իսկ ժամանակն է՝ սեփական հանքահումքային ռեսուրսների հենքի վրա Հայաստանում զարգացնելու զարդերի և հուշանվերների հզոր արդյունաբերություն դուրս գալու միջազգային շուկա և աշխարհին ներկայացնել մեր այս «հրաշալիքների» հավաքածուն: Այս մասին հաջորդ համարում:

Հ. ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ

Ասես ո՞ւր է տանելու այս ճանապարհը...

Գիտության և աշխատանքի երախտավորը

Բոլորեց հանրապետության գյուղատնտեսական գիտության նվիրյալներից մեկի՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՀՀ գյուղատնտեսական ակադեմիայի հիմնադիր անդամ, գիտության վաստակավոր գործիչ Վաղինակ Բոգդանի Ոսկանյանի ծննդյան 85-ամյակը:

1939 թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը, զորակոչվում է բանակ, որտեղ ծառայում է 7 տարի, մասնակցելով Մեծ Հայրենականին: Նրա առաջին օրից մինչև հաղթական ավարտը՝ շարքային զինվորից դառնալով գվարդիայի մայոր:

Բանակից զորացրվելուց հետո աշխատանքի է անցնում Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի գյուղատնտեսական կենդանիների բուժման ամբիոնում իբրև ասիստենտ: 1949 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ, իսկ 1961-ին՝ դոկտորական: 1956—1964 թթ. վարել է նույն ինստիտուտի ուսումնական և գիտական աշխատանքների գծով փոխտնօրենի պաշտոնը: 1964—1987 թթ. աշխատել է Հայկական անասնաբուծության և անասնաբուժության (որը 1980 թ. վերակազմավորվել է Հայկական անասնաբուծության և կերարտադրության) գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, 1987 թ. մինչև իր վախճանը (1997 թ.) մշտապես աշխատում էր հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գյուղատնտեսական կենդանիների բուծման ամբիոնում, որպես պրոֆեսոր:

Պրոֆեսոր Վ. Ոսկանյանի անմիջական նախաձեռնությամբ ինստիտուտում կազմակերպվել են մի շարք բաժիններ, այդ թվում նրա ղեկավարությամբ՝ գյուղատնտեսական կենդանիների գենետիկայի և սելեկցիայի բաժինը, որը 20 տարվա ընթացքում արդյունավետ հետազոտություններ է կատարել կովկասյան գորշ, այնուհետև սևաբղետ ցեղերի տավարի կենսաբանական և մթերատու հատկանիշների պոպուլյացիոն-գենետիկական առանձնահատկությունների ուսումնասիրման, դրանց հետ նպատակասլաց սելեկցիոն-տոհմային աշխատանքի վարման և կատարելագործման, արդյունաբերական տրամախաչման և այլ ուղղություններով:

Պրոֆեսոր Վ. Ոսկանյանի շուրջ կեսդարյա գիտական գործունեությունն ընդգրկում է հանրապետությունում անասնաբուծության զարգացման տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք կարևոր հիմնահարցեր: Գիտականի գրչին են պատկանում 250-ից ավելի գիտական աշխատություններ, մենագրություններ, գրքույկներ:

Նրա առաջին գիտական աշխատանքները նվիրված են եղել հայրենի Կապանի շրջանի տեղական և խառնացեղ տավարի կենսաբանական և մթերատու հատկությունների ուսումնասիրությանը, որն ամփոփվել է թեկնածուական թեզում: Առավել կարևոր գիտական աշխատանքներից են նրա դոկտորական թեզը և նույն թեմայով գրված «Հայաստանի խառնացեղ տավարի կոնստիտուցիան և մթերատվությունը» մենագրությունը, որում բացահայտված են կերակրման և խնամքի բարենպաստ ու անբարենպաստ պայմաններում համակազմվածքի, ինչպես նաև կաթնային և մսային մթերատվության ձևավորման օրինաչափությունները: Գիտաարտադրական բազմաթիվ փորձերից ստացված նյութերով գրված «Մսացու մատղաշի ինտենսիվ աճեցումը և բտումը» աշխատությունում բացահայտված են կովկասյան գորշ և սիմենտալ ցեղերի մատղաշի ինտենսիվ աճեցման դրական արդյունքները, այդ եղանակի արտադրության մեջ ներդրման նպատակահարմարությունը և բարձր տնտեսական արդյունավետությունը:

«Հայաստանի տավարաբուծությունը» ծավալուն մենագրության մեջ նա ընդհանրացրել և ամփոփել է վերջին 40 տարում հանրապետությունում տավարաբուծության մեջ կատարված քանակական և որակական տեղաշարժերը, սեփական ուսումնասիրությունների և բազմաթիվ այլ հեղինակների աշխատությունների վերլուծության հիման վրա լուսաբանել սելեկցիոն-տոհմային աշխատանքների, կաթի և տավարի մսի արտադրության, կերակրման, կերարտադրության և բազմաթիվ այլ հարցեր: Մենագրությունը լայնորեն օգտագործվում է մասնագետների, ուսանողության և արտադրության գյուղատնտեսական գիտությունների ուսումնասիրությանը, որն ամփոփվել է թեկնածուական թեզում: Առավել կարևոր գիտական աշխատանքներից են նրա դոկտորական թեզը և նույն թեմայով գրված «Հայաստանի խառնացեղ տավարի կոնստիտուցիան և մթերատվությունը» մենագրությունը, որում բացահայտված են կերակրման և խնամքի բարենպաստ ու անբարենպաստ պայմաններում համ

ՀԱՅԱՍՏԱՆ, ՂԱՐԱԲԱՂ, ԳՈՐԲԱՉՈՎ

18 հուլիս, 1988 թվական

Սերգեյ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Ակադեմիկոս

Կրեմլյան խաղեր... Սառը պատերազմի տարիներին այդ խաղերից նույնիսկ Արևմուտքը էր սարսափում: Իսկ ահա մենք՝ հայերս, 1988-ի ղարաբաղյան շարժման նախօրեին հայտնվեցինք այդ խաղերի էպիկենտրոնում: Այն ժամանակ դժվար էր, շատ դժվար հասկանալ, ըմբռնել այդ ամենը, առավել ևս՝ ճիշտ դիրքորոշում ու վճիռներ կայացնել, զոհ չդառնալու համար: Այնուամենայնիվ, որ ղարաբաղյան շարժման մեջ մենք մտանք անկեղծ մղումներով, պատմական ճշմարտացիությունը, պատմական արդարությունը վերահաստատելու միտումով, դա պարզ է: Պարզ է և այն, որ Գորբաչովյան Կրեմլը ոչ միայն անկեղծ չէր երևույթի նկատմամբ, այլև իր սցենարով էր մշակում իրադարձությունների զարգացումը՝ երկրում իրավիճակը, ազգամիջյան հարաբերությունները առավել սրելու, երկարաժամկետ թշնամություն սերմանելու նպատակով: Մեր մտավորականության արժանավոր զավակները այդ գիտակցում էին և պայքարի առաջին գծում էին: Նրանց հետ էր ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, որի հրապարակումը («Երեք տարի սիրո և մահվան սահմանագծում» գրքից) մասամբ լույս էր սփռում տաս տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների, Կրեմլյան խաղերի վրա: Եվ այսպես՝ տաս տարի առաջ. 1988-ի հուլիս...

Այդ օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 10 պատգամավորներից և խորհրդականներից (Լ. Խուրշուդյան, Ցու. Մկրտումյան, Բ. Հարությունյան՝ ԵՊՀ) բաղկացած մեր խումբը վշտացած ու դառնացած «Մոսկվա» հյուրանոցից ուղղվեց Կրեմլ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարցի քննարկմանը նվիրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստին:

Նախօրյակին մեզ հայտնի էր դարձել արդեն, որ ԽՍՀՄ ԳԽ նախագահության ընդունվելիք որոշման նախագծում ԼՂԻՄ խնդիրը հանգեցված էր հայ «ծայրահեղականների» անհիմն պահանջներին, և ամեն ինչ պետք է մնա առանց որևէ փոփոխությունների:

•°•

Պետական հանրախանութի (ԳՈՒՄ) մոտ միլիցիոներները մեզ անջատեցին մեր խորհրդականներից, որոնք մեծ աշխատանք էին կատարել պատգամավորներին հետ: Կարմիր հրապարակի մայթեզրին մենք մենակ մնացինք մեր խոհերի հետ: Մինչև Կրեմլի Սպասկու աշտարակ հասնելը շատերիս մեջ ակամա հուսահատ միտք հղացավ՝ եթե չկարողանանք փոխել քննարկման ընույթը և որոշման առաջարկված նախագիծը ընդունվի առանց փոփոխությունների, հրաժարվել պատգամավորական լիազորություններից:

Նախագահության նիստը սկսվեց առավոտյան ոտիղ ժամը 10-ին և տևեց 8 ժամ (երկու ընդմիջումներով): Մթնոլորտը դաժան էր: Թերևս առաջին անգամ նախագահության նիստը տեղի էր ունենում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պալատների դահլիճում: Ամբիոնը տեղափոխվել էր, որպեսզի ելույթ ունեցողները մեջքով չկանգնեն նախագահության անդամներին:

Նախագահությունում տեղեր գրավեցին նախագահության անդամները, դահլիճում տեղավորվեցին հրավիրված պատգամավորները, քաղաքական-հասարակական գործիչներ, գիտնականներ, լրագրողներ: Միացված էին հեռուստախցիկները, միկրոֆոնները: Զգացվում էր առաջիկա «ներկայացման» բեմադրիչների բարձր արհեստավարժությունը: Չէ՞ որ այն ցուցադրվելու էր ողջ աշխարհին, և աշխարհը վերջապես պիտի իմանար, թե ինչ վատն են այդ հայերը: Իսկ հայերը եկել էին վերակառուցման պիոներներին ցույց տալու, որ իրենց պահանջները արդարացի են, համաձայն են ժամանակի ոգուն և որ իրենք կանգնելու են մինչև վերջ:

Նիստը բացեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Ա. Գրոմիկոն: Եվ տասնհինգ մի քանի թոպ հետո նրա իշխանությունը զավթեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ ԳԽ նախագահության անդամ Մ. Ս. Գորբաչովը, Հազվագյուտ իրավիճակ էր. իրար կողքի նստել էին «գրոհի» կազմակերպիչ ու առաջնորդ Մ. Ս. Գորբաչովը և «մուճջ» Ա. Ա. Գրոմիկոն: Վերջինս խոսում էր միայն այն պահերին, երբ նախապես պատրաստված ցուցակով և նախապես մշակված սցենարով խոսք էր տալիս հերթական ելույթ ունեցողին:

Նախագահության անդամների ելույթները, բացառությամբ մի քանի «մոլորյալների», միանման էին և գրեթե չէին տարբերվում իրարից: Այն տպավորությունն էր, որ այդ ելույթները պատրաստել է մեկ մարդ, կամ տարբեր մարդիկ, բայց մեկ միասնական սկզբունքով: Բանն այն է, որ ըստ էության նրանք բոլորը թեև տարբեր կերպ, բայց ասում էին նույն բանը և չէին փորձում անգամ տարրական ապացույցներ բերել հաստատելու իրենց պնդումները: Բոլորը միաբերան պնդում էին, որ ամեն ինչ պիտի լինի այնպես, ինչպես առաջարկված է ԽՍՀՄ ԳԽ նախագահության որոշման նախագծում:

Որոշ կրճատումներով ներկայացնում եմ մեջ բերումներ Վ. Օլովի, Ա. Մոկանի, Վ. Շչերբիցկու, Լ. Զայկովի, Ռ. Նիշանովի, Ա. Ոյուտելի, Ա. Սախարևի, Վ. Ատտրաուսկասի, Զ. Կամալդինովի, Ա. Լոգանովի, Ի. Աբաշիձեի, Ա. Գիտարովի ելույթներից:

— Այս ամենից կարելի է հետևություն անել, որ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ ակտիվորեն և կազմակերպված գործում են հակահեղափոխական ուժեր, որոնք բորբոքում են առճակատումը, հմտորեն խաղում մարդկանց ազգային զգացմունքների վրա:

— Սա խորամանկ մանևրն է նրանց, որոնք արգելակում են վերակառուցմանը՝ մարդկանց ուշադրությունը շեղելով այն խնդիրներից, որոնք այդ հանրապետություններում իսկապես պիտի լուծել. դրանք կադրային հարցերն են, պայքարը նեգատիվ երևույթների, սնվերային էկոնոմիկայի և հովանավորչության դեմ:

— Մենք հավատում ենք, որ կոմունիստները, Հայաստանի և Ադրբեջանի բոլոր աշխատավորները ուժ և արիություն կգտնեն հաղթահարելու ծագած տարաձայնությունների դժվարությունը, պահել և ամրապնդել իրենց բարեկամությունը՝ ի շատ խորհրդային ողջ ժողովրդի:

— Պետք է ուղղակի ասել նաև տնտեսական այն լուրջ վնասի մասին, որ պատճառում են այդ անկարգությունները Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների տնտեսությանը, ողջ երկրի էկոնոմիկային:

— Հանրապետությունների և մարզերի սահմանների վերաձևումը կարող է խզել տնտեսական կապերը, արգելակել ժողովրդատնտեսական միասնական համալիրի զարգացմանը:

— Մենք իրավունք չունենք մոռանալու, որ արտասահմանյան ինչ-որ ուժեր փորձում են հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի այն, ինչ հիմա կատարվում է Անդրկովկասում, թերևս ավելի մեծ մասշտաբով ծավալվի մեր երկրի այլ շրջաններում:

— Նման բարդ իրավիճակում շատ դժվար է առաջարկել պատրաստի որևէ դեղատոմս: Բայց եթե պետք է խոսել լուրջ մասին, ապա դա միայն և առաջին հերթին պայքարն է սեփական նացիոնալիզմի և շովինիզմի դեմ:

— Հայաստանում ընդունված որոշումները հակասում են ԽՍՀՄ սահմանադրությանը: Մենք պետք է ղեկավարվենք մեր երկրի հիմնական օրենքով, իսկ ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու մասին խոսք անգամ լինել չի կարող:

— Այս հանգույցի լուծման համար պետք է դադարեցվեն վերջնագրային պահանջները, գործադուլները, ծայրահեղական կարգախոսներով հանրահավաքները:

— Կուտակված պրոբլեմների լուծման միակ ճիշտ ուղին յուրաքանչյուրի ազնիվ աշխատանքն է:

— Ժողովուրդների բարեկամությունը այն ուժը է, որն օգնեց հաղթել ֆաշիզմին: Ժողովուրդների բարեկամությունը՝ վերակառուցման գլխավոր շարժիչ ուժն է:

— Սա մեր ընդհանուր ցավն է ու տագնապը մեր սոցիալիստական պետության համար,

Խղճուկ և վաղուց հայտնի ու շարտրկված մտքեր ու նախադասություններ, որոնք ինչպես կյանքը ցույց տվեց, Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ ստեղծված իրադրությունը լիցքաթափելու համար ոչինչ չտվեցին և չէին կարող տալ:

Հետաքրքիր է, ի՞նչ են այսօր մտածում այդ օրթոդոքս մտքերի հեղինակները, երբ գրեթե ամբողջ երկիրը պատված է 1988 թվականի ԼՂԻՄ-ի կարգի քաղաքական իրողություններով՝ միայն թե շատ ավելի սուր դրսևորումներով և անկանխատեսելի հետևանքներով: Ես կարծում եմ, որ նրանք այդ մասին չեն ուզում հիշել և եթե անգամ հիշում են, ապա, անպայման մեծ ցավով (մարդկանց մասին պետք է միշտ լավ մտածել):

Ինքնատիպությամբ չէին տարբերվում նաև մյուս ելույթները: Ահա մի հատված նիստին մասնակից, ակադեմիկոս Ե. Պրիմակովի ելույթից.

— Պետք է նայել ճշմարտության աչքերին և ասել՝ մենք բոլորս կոմունիստներ ենք, և հետո արդեն հայեր, ադրբեջանցիներ, ռուսներ, ուկրաինացիներ և այլն, և այլն: Եվ եթե դա այդպես է, ապա մեզ համար ահա այս առճակատումը պետք է դիտվի վերակառուցման տեսանկյունից: Եվ եթե պայթի այդ առճակատումը, ապա դա վերակառուցման տակ դրված ական է: Այս հարցի լուծման համար անկասկած է փոխզիջման անհրաժեշտությունը: Քանի որ անհիշում դիրքորոշումը ծայրահեղականության համար պարարտ հող է: Ներկա դեպքում չի կարելի վկայակոչել պատմությունը, դա արդյունավետ չէ: Պատմությունը չափանիշներ չունի: Եթե նման չափանիշ լիներ, ապա մենք պետք է հնարավոր համարենք, որ եթե 13-րդ դարում ինչ-որ մեկը տիրել է որևէ հողի, նշանակում է այդ հողը մշտապես պատկանում է նրան: Կամ, ասենք, 19-րդ դարում և այլն:

Կառուցողական չէ նաև բնակչության մեջ որևէ ազգային տարրի մեծամասնություն լինելու հանգամանքի վկայությունը,

Ես ծնրադիր խոնարհվում եմ ընկեր Վեզիրովի առջև, որը շիտակ ասում է այն մասին, որ ադրբեջանական ղեկավարությունը, իրոք, մեղավոր է նրանում, ինչ կատարվել է Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Եթե ընկ. Վեզիրովը արտահայտում է իր տեսակետը և բոլորը լսում են այն, ինչը և ինչպես ասում է նա, բոլորը համոզվում են, թե նա ինչպիսի իսկական ինտերնացիոնալիստ է: Ես, օրինակ, երբեք չեմ հավատում, որ նա կարող է որևէ գիծ տանել՝ ազգային-հայկական ինչ-որ բաներ սահմանափակելու ուղղությամբ: Իհարկե, այսօր չի կարելի մարզը փոխանցել կամ պոկել Ադրբեջանի տարածքից: Հիմա վիթխարի պատասխանատվություն է ընկած այն մարդկանց վրա, որոնք նստած են այստեղ, նախագահությունում: Նրանք չեն կարող կատարել քայլեր, որոնք վտանգի են ենթարկում Խորհրդային Միությունը: Եկեք իրերը կոչենք իրենց անուններով և այդպիսի բան չպահանջենք նրանցից: Ես գըտնում եմ, որ սա ընդհանրապես անընդունելի է, այդ բանը չի կարելի թույլ տալ»:

Ավելի չպատճառաբանված, չհիմնավորված ելույթ քան սա է, դժվար է պատկերացնել: Մանավանդ, եթե չմոռանանք, որ դրա հեղինակը հայտնի գիտնական է և քաղաքագետ: Այս ելույթը աննկատ անցավ բոլորի, կամ գրեթե բոլորի համար, բացառությամբ նրանց, որոնց համար այն նախատեսված էր:

Այս «ծրագրային» ելույթի գլխավոր նպատակը նախագահության որոշման առաջարկվող նախագծի համար ինչ-որ տեսական հիմնավորում ստեղծելն էր: Սակայն այս ամենը չտիազանց անդուր տեսք ուներ: Եվ չնայած դրան, ակադեմիկոսի ելույթը օգնեց նրան, գրավելու քաղաքական բարձրագույն պաշտոններ: Տեսնո՞ւմ եք, ինչքան քիչ բան է պետք մեծ կյանքում բարձր դիրք ապահովելու համար:

Ամենաապահովեն «գլուխգործոց» էր երիտասարդ մի ֆունկցիոների ելույթը, որն սկսվեց այսպես. «Ես շատ կուզեի հավատալ, որ բանականության ձայնը, ողջախոհության կոչը, որը հենց նոր հնչեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովի շուրթերից, կհասնի Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին և երիտասարդությանը»: Եվ ապա. «Մենք, նաև կոմերիտմիությունը, պետք է օգնենք Հայաստանի մարդկանց ու երիտասարդությանը՝ հասկանալ, որ նրանց, մեղմ ասած, թյուրիմացության մեջ են գցում: Իմ կարծիքով, Սերգեյ Ալեքսանդրովիչը, ցավոք, ասաց ճշմարտությունը: Նա խոսում է Երևանի ուսանող երիտասարդության նշանակալի մասի անունից: Ես չգիտեմ, արդյո՞ք ամբողջ երիտասարդության: Կարծում եմ՝ ոչ: Բայց որ նա խոսում է թյուրիմացության մեջ ընկած ուսանող-երիտասարդության, Երևանում գործադուլներ ու նստացույցեր անող և այդ միջոցներով խնդիրը լուծելու հնարավորությունը սրբորեն հավատացող երիտասարդության անունից, դա իսկապես այդպես է»: Հետո նա ավելացրեց. «Երևանում, Հայաստանում, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և Ադրբեջանում ակա ներկա քաղաքական իրադրության պայմաններում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի խընդրանքը բավարարվել չի կարող: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջարկած որոշումը անընդունելի է նաև նրանով, որ մեղքը հիվանդ գլխից գցում է առողջ գլխի վրա: Բայց թվում է, որ նախկին ղեկավարներից ոմանք, այո, հավանաբար նաև մարդիկ այն կորումպացված շրջաններից, որոնց մասին խոսեց Միխայիլ Սերգեևիչը, պատրաստ են զոհաբերել իրենց ժողովրդին՝ սեփական մեղքերը քողարկելու և թաքցնելու նպատակով»:

Հետագայում ես հաճախ եմ հանդիպել այս մարդու հետ: Նա արդեն բարձր պաշտոն չէր զբաղեցնում երկրի կուսակցական ղեկավարության սանդղակում: Պատկերացրեք, նորմալ, նույնիսկ հաճելի մարդ էր, «ժամանակակից» մտավորական: Ես զարմացած էի և շատ ուրախացա: Ամենայն հավանականությամբ, այն օրերին, ինչպես շատ ուրիշ պաշտոնատար անձինք, նա կատարում էր ֆունկցիոների իր պարտքը: Ըստ էության, նա դարձավ վարչահրամայական համակարգի հերթական զոհը, և ես ուրախ եմ, որ չարաբաստիկ համակարգը չկարողացավ մինչև վերջ փչացնել նրան: Քանի որ, եթե ուշադիր նայենք մեր շուրջը, այսօր մեր շրջապատում և երկրում «եղանակ» են ստեղծում հասարակական, պետական, քաղաքական երկրորդ էշելոնի գործիչները, որոնց վերջնականապես փչացրել էին այն արատավոր գաղափարախոսությունն ու մեթոդները, որոնք տասնամյակների ընթացքում մշակվել էին երկրի ղեկավար վերնախավի ընդերքում:

Եղան և նախագահության անդամների անկախ ելույթներ: Մասնավորապես տպավորվեց Տաճիկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Գ. Պալաևի անկեղծ խոսքը: Ահա մի քանի պատառիկ այդ ելույթից. «Ես բացահայտ կասեմ. Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում և Ադրբեջանում ընթացող անառողջ երևույթները չեն կարող չընպատճառել խորը ցավ և մտահոգություն»: «Իհարկե, Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձություններն ունեն իրենց պատճառները: Վերջին տասնամյակներին այստեղ, ինչպես երևում է, ազգամիջյան հարաբերություններում կուտակվել են ոչ քիչ պրոբլեմներ, որոնք պետք է լուծել... Խնդիրը ձևը չէ, թեև դա էլ է կարևոր, այլ բովանդակությունը: Գլխավորը լեզվի և ընդհանրապես ազգային մշակույթի զարգացման ապահովումն է, պետք է լուծվեն մյուս պրոբլեմները, որոնք կուտակվել են երկար ժամանակում»: Եվ վերջապես, «Գուցե իսկապես մտածել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի բարձրացման մասին: Եվ մինչև իրադրությունը կկարգավորվի, գուցե արժե այնտեղ ուղարկել ԽՄԿԿ ԿԿ, Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչներ»:

Շիտակ և օբյեկտիվ էր աշխարհահռչակ ակադեմիկոս Գ. Բասովի ելույթը. «Դժվար է խոսել այն իրադարձությունների մասին, որոնք կատարվել են... Ահա արդեն քանի ամիս Լեռնային Ղարաբաղը շարունակում է մեզ անհանգստացնել: Կատարվում են բաներ, որոնք չեն տեղավորվում մեր գիտակցության մեջ, անհնար է պատկերացնել, որ դրանք կատարվում են 20-րդ դարի վերջում»: Եվ ապա. «Հիմա փոխզիջման այն տարբերակը, որ այստեղ փորձում է փնտրել Միխայիլ Սերգեևիչը: Բայց պետք է այն գտնել: Այս խնդիրը չի կարող լուծում չունենալ: Ես կարծում եմ, որ լուծումը պետք է գտնվի: Եվ լուծումը, իհարկե, փոխզիջման մեջ է... Ցավ է զգալ, որ մենք ականատես ենք չլուծվող խնդրի ծագման երևույթին: Ես կարծում եմ, որ Գերագույն խորհրդի նախագահության անունից գործող պատգամավորական հանձնաժողովը գուցե թե կարողա օգնել գըտնելու այդպիսի լուծում»:

Եվ, իհարկե, հոչակավոր և սիրված բանաստեղծ Ռասուլ Համզատովի ելույթը, որը հայտարարեց. «Մեր այսօրվա որոշումից կախված է լինելու, թե ինչ ժառանգություն ենք թողնելու մենք մեր թոռներին ու ծոռներին՝ ապագա տասնամյակների ազգային թշնամա՞նք, թե՝ թև ու թիկունք զգացում... Իմ առաջարկը պարզ է. առայժմ ամեն ինչ թողնել, ինչպես որ կա և որը համաձայն է Սահմանադրության պահանջներին: Միաժամանակ, մինչև սկզբունքային որոշումների ընդունումը, երևի հարկ է նաև քննարկել մարզը միութենական ղեկավարությանը ժամանակավոր կառավարման հանձնելու հնարավորությունը»:

Օրինակ, երբ ընդմիջման ժամանակ Ռ. Նիշանովը արտահայտեց իր անհամաձայնությունը որոշման նախագծի հետ և ես առաջարկեցի նրան այդ մասին ասել ամբիոնից, նա անկեղծորեն զարմացած ասաց. «Ի՞նչ եք ասում, Սերգեյ Ալեքսանդրովիչ»: Ռ. Նիշանովը, որ ընդհանուր առմամբ կարգին մարդ էր, չէր հասկանում, որ կարելի է հանդես գալ նաև Գերագույն խորհրդի նախագահության պատրաստած որոշման նախագծի դեմ, Այդպիսին էին բարքերը:

Ահա, թերևս, այս էր բոլորը: Մնացածները իրենց «անհամաձայնությունը» նախագահության որոշման նախագծի հետ արտահայտում էին ընդմիջումների ժամանակ, ոչ պաշտոնական, ղեկավարության և բազմաթիվ դիտողների սուր աչքերից թաքուն: Ամեն ինչ ընթանում էր տասնամյակներով ստուգված կեղծ դեմոկրատիայի կաղապարներով:

Միանգամայն հակառակ էին Ադրբեջանի (Ս. Տատլին, Ա. Վեզիրով, Մ. Իբրահիմով) և Հայաստանի ու ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների ելույթները (Հ. Ռսկանյան, Ս. Հարությունյան, Հ. Պողոսյան, Վ. Համբարձումյան, Վ. Պետրոսյան): Բնականաբար, դրանք սկզբունքորեն տարբերվում էին իրարից՝ թե՛ ձևով, և թե՛ բովանդակությամբ:

Ադրբեջանցիները խոսում էին երկրի ղեկավարության սխեմայով, քաղաքաշինում ոճով, որը, բնականաբար, արժանացավ ղեկավարության հավանությանը: Նրանց ելույթների գլխավոր գիծը արդեն երիցս չարչրկված ու շահարկված քարոզչական կարգախոսներն էին ժողովուրդների բարեկամության, ԽՍՀՄ սահմանադրության անձեռնմխելիության, սահմանների «վերաձևման» գաղափարի անընդունելիության, ազգայնամոլական դրսևորումների դեմ մղվող պայքարի, երկու հանրապետությունների բանվորների, կոլտնտեսականների, մտավորականության միջև կապերի հաստատման անհրաժեշտության, քաղաքների և գյուղերի բնակիչների մերձեցման, ժողովրդի մեջ մտավորականության ներկայացուցիչների հեղինակության բարձրացման անհրաժեշտության մասին և այլն և այլն:

Բոլոր ելույթները՝ լճացման տարիների ոգով: Փոխզիջումների մասին ոչ մի խոսք:

Ադրբեջանցիները խոսում էին վստահ, և ոչ մեկը նրանց չէր ընդհատում: Զգացվում էր լիակատար համաձայնությունն ու պայմանավորվածությունը նրանց և գերագույն ղեկավարության միջև:

Նախանձելի չէր հայերի վիճակը: Նրանց ելույթները մշտապես ընդհատվում էին տեղերից հնչող հարցերով ու ռեպլիկներով, Մ. Ս. Գորբաչովի անտաշ միջամտություններով: Եվ որքան տրամաբանական ու հիմնավորված էին լինում մեր ներկայացուցիչների ելույթները, այնքան կոպիտ ու խիստ էին դառնում նրա միջամտությունները: Արվում էր ամեն ինչ, հայ հռետորներին շփոթեցնելու, նրանց բերած ծանրակշիռ փաստարկների թույր լինելու տպավորություն ստեղծելու համար: Սակայն գրոհի առաջատարին այդ բանը չհաջողվեց իրագործել: Գործողությունների և քննարկման նախապես մշակված սխեման փլվեց տվյալաթերթի տնակի նման: Հարկ եղավ, տառացիորեն քննարկման ընթացքում, փոխել տակտիկան և պատրաստել որոշման ուրիշ նախագիծ, որն էլ հաջողությամբ իրագործվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալի կողմից: Եվ դա կատարվեց այնքան արագ, որ անգամ նախագահողը չկարողացավ հասկանալ, թե ինչ կատարվեց և ցանկացավ նախագահության որոշման ընդունումը հետաձգել հաջորդ օրվան:

Պատկերի լիակատարության համար մեջբերում եմ պատգամավորների ելույթներից և այդ նիստում Մ. Ս. Գորբաչովի հետ նրանց երկխոսություններից: Մեջբերումները անում եմ բացառապես հիշողությամբ, միայն առանձին դեպքերում՝ այդ օրերի թերթերից:

Քաղվածքները մեջ են բերվում առանց անձնավորման: Չէ՞ որ մեզ հիմնականում պետք է հետաքրքրի, թե ինչ է ասվել, այլ ոչ թե՝ ով է ասել:

— Նման որոշման (ըստ նախագծի) ընդունման դեպքում, այն հայ ժողովրդի մեջ կհարուցի ցավ և հիասթափություն:

— Ո՞չ մարզի բնակչությունը, ո՞չ ՀԽՍՀ բնակչությունը չեն հաշտվել նման աղաղակող անարդարության հետ (նկատի է առնվում այն փաստը, որ Ստալինի պնդմամբ Կազբյուրոն վերանայել է 1921 թվականի հուլիսի 4-ի իր որոշումը, որի հետևանքով ի սկզբանե հայկական մարզ Լեռնային Ղարաբաղը, որի բնակչության 95 տոկոսը կազմում էին հայերը, մեխանիկորեն օտարվեց Հայաստանից, մտցվեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ):

— Հաջորդ տասնամյակների ողջ ընթացքում հայ ժողովուրդը և հանրապետության ղեկավարությունը բազմիցս բարձրացրել են պատմական արդարության վերականգնման հարցը:

— ԽՍՀՄ Սահմանադրության 2-րդ հոդվածը, որը որպես ԽՍՀՄ քաղաքական հիմք ամրագրում է մեր երկրում ժողովրդի լիակատար իշխանությունը և ժողովրդական պատգամավորների խորհուրդների կարգավիճակը, ինչպես նաև ԽՍՀՄ սահմանադրության 70 հոդվածում, որը արտահայտում է ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքը, հաստատագրում է մեր միասնական միութենական բազմազգ պետության կառուցվածքի հիմքը:

— Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման ժամանակ ճիշտ չէ առարկել ԽՍՀՄ սահմանադրության 78 հոդվածով և հարցը հանգեցնել Հայկական ԽՍՀ-ի Ադրբեջանական ԽՍՀ-ի նկատմամբ տարածքային չեղած հավակնությունների խնդրին: Հայկական ԽՍՀ-ն որևէ տարածքային հավակնություններ չի ներկայացնում: Խոսքը վերաբերում է ազգի ինքնորոշման սահմանադրական իրավունքին:

— Պետք է նկատի ունենալ, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի սրման կարևոր աղբյուր է հանդիսանում Նախիջևանի ԻԽՍՀ-ի հայ բնակչության լրիվ արտաքսման փաստը: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության համար այն ներկայանում է որպես իր ապագա ճակատագրի իրական նախադեպ:

— Մ. Ս. Գորբաչովի դիմումից հետո (2-ը փետրվարի, 1998 թ.), իշխանությունների բացահայտ քաջալերմամբ, Սումգայիթում սկսվեցին հայկական բնակչության կոտորածները: Սոցիալիզմի պայմաններում այդ անլուր բարբարոսությունն դրսևորումը կտրուկ բարդացրեց իրադրությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ:

— Երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը շատ աղոտ պատկերացում ունի այն երկրամասի պատմության և աշխարհագրության մասին, որտեղ ծավալվել են մի իրադարձություններ: Իսկ լավատեղյակները ոչ մի տարակույս չունեն, որ Լեռնային Ղարաբաղը հնուց ի վեր բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի մասն է:

— Իսկ ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ մենք Ադրբեջանի կազմի մեջ մտանք ինքնավարությամբ և մեր հողով: Ինչպես վերաբերվել Սահմանադրության 11-րդ հոդվածին, որի համաձայն Խորհրդային Միության ցանկացած անկյունում հողը բացառապես պետության սեփականությունն է և համարվում է խորհրդային ողջ ժողովրդի ընդհանուր ունեցվածք: Հարցի լուծման գործում ադրբեջանական ժողովուրդը ինչո՞ւ պիտի ունենա Վետոյի իրավունք, ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որ սոցիալիստական պետության մեջ մի ժողովուրդ որոշի մեկ ուրիշ ժողովրդի ճակատագիրը:

— Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը չի կարող գոհանալ միայն ու միայն նյութական բարիքներով՝ ի վնաս ազգային-մշակութային և հոգևոր զարգացման: Եվ պատահական չէ, որ Ղարաբաղի հարյուր հազարավոր հայեր լքել են իրենց օջախները և այսօր ստիպված են ապրել մարզի սահմաններից դուրս: Գուցե թե լավ կյանքից են նրանք թողնում իրենց հայրենի օջախները: Ինչպես կյանքը ցույց է տվել, Լեռնային Ղարաբաղի հարցի անարդարացի լուծումը կհանգեցնի իր հայրենիքից հայ էթնոսի լիակատար դուրս մղմանը:

— Հարգանքի տուրք Ադրբեջանի այն հասարակ մարդկանց, որոնք վտանգելով իրենց կյանքը, փրկել են հայերի կյանքը: Միաժամանակ մենք հակառակ ենք այն մարդկանց, որոնք խոսում են ժողովուրդների բարեկամության մասին և միաժամանակ Ղարաբաղի հայ ազգաբնակչության համար փաստորեն ուզում են հաստատել մի վիճակ, որ ամբողջ աշխարհում անվանվում է «գաղութային ռեժիմ»:

— Ավելորդ չեմ համարում հիշեցնել մի պարզ իրողություն: Որպես ազգային-տարածքային միավոր Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է ոչ թե Ադրբեջանի, այլ մեր միասնական տան՝ Խորհրդային Միության անքակտելի մասը:

(Շարունակելի)

Վաստակ

Կան մարդիկ, որոնք աշխարհ են գալիս բնածին ըզգացողությամբ, իրենց նվիրում են շնորհակալ մի գործի և նրանց համար հաղթահարելի են թվում կյանքի բոլոր դժվարությունները: Այդպիսին է ֆիզիոլոգիական հասարակայնությանը քաջ հայտնի պրոֆեսոր Լևոն Մատինյանը:

1946 թվականին, գերազանց գնահատականներով ավարտելով Թբիլիսիի պետական բժշկական ինստիտուտը, Լևոն Մատինյանը նույն թվականին ընդունվում է Երևանի բժշկական ինստիտուտի կլինիկական օրդինատուրան: Սովորելուն զուգընթաց նա 1947 թվականին սկսում է աշխատել գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտում, սկզբում որպես լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող: 1954-ից մինչև 1971 թվականը՝ ավագ գիտաշխատող և, միաժամանակ, ինստիտուտի գիտական քարտուղար: 1971 թվականից ղեկավարում է ինստիտուտի նյարդա-ներզատական փոխհարաբերությունների լաբորատորիան, իսկ 1985 թվականից մինչև 1994 թվականը ղեկավարել է ինստիտուտի գիտական գործունեությունը, լինելով նրա փոխտնօրենը՝ գիտության գծով: 1952 թվականին Լ. Ա. Մատինյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1970 թվականին՝ դոկտորական թեզերը:

Պրոֆեսոր Մատինյանի գիտական ստեղծագործական ուղին առանձնանում է զարմանալի նպատակադրվածությամբ, հետևողականությամբ, որոնք նրան դասել են մեր հանրապետության և Միության ճանաչված ֆիզիոլոգների շարքը: Նրա գիտական ուսումնասիրությունների տիրույթը լայն է ու տարողունակ: Դեռ 50-ական թվականներին նա ուսումնասիրել է Հայաստանի հանքային ջրերի ֆիզիոլոգիական ազդեցությունը երիկամների ֆունկցիայի վրա, ապա՝ երիկամների գործունեության նյարդա-հումորալ մեխանիզմները, կենտրոնական նյարդային համակարգի և մակերիկամների, ենթաստամոքսային գեղձի ու ենթատեսաթմբի միջև եղած ֆիզիոլոգիական փոխհարաբերությունները: Ուսումնասիրել է մի շարք հորմոնների ազդեցությունը կենտրոնական նյարդային համակարգի գործունեության վրա, մարդու և կենդանիների կենսածին ռիթմերի ֆիզիկա-մեխանիկական ասպեկտները: 1959 թվականից սկսած նա նպատակասլաց ու խորությամբ ուսումնասիրել և ուսումնասիրում է ողնուղեղի վնասման հետևանքով խախտված մարմնական և վեգետատիվ ֆունկցիաների վերականգնման ֆիզիոլոգիան: Այս հետազոտություններում իրենց առանձնակի տեղն ունեն այն փաստերը, որոնք նվիրված են տարբեր դասերի պատկանող (երկկենցաղներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ) կենդանիների ողնուղեղի վնասումներից հետո վերականգնողական ֆունկցիաների ուսումնասիրության արդյունքները՝ կատարված էլեկտրաֆիզիոլոգիական, նյարդա-ձևաբանական, հյուսվածքաքիմիական, կենսաքիմիական և պայմանա-ռեֆլեկտորային մեթոդներով: Այս ուղղությամբ ստացված հետաքրքիր արդյունքները ամփոփված է նրա «Ողնուղեղի վնասման ժամանակ վերականգնողական հարմարումների համեմատական ֆիզիոլոգիական առանձնահատկությունները» դոկտորական թեզում (1970) և նույն վերնագրով ակադեմիկոս Էդրաս Հասրաթյանի ներածական խոսքով գրված մենագրության մեջ: Նյու-Յորքի համալսարանի պրոֆեսոր Ռ. Ռիհնդելը բարձր է գնահատել այս աշխատությունը և թարգմանել ու հրատարակել անգլերեն:

Պրոֆեսոր Լ. Մատինյանն առաջինն էր, որ նպատակասլաց զբաղվեց ողնուղեղի վնասված ֆունկցիաների ֆերմենտոթերապիայով: Նրան հաջողվեց ապացուցել, որ բուսական ծագման որոշ ֆերմենտների (ինչպիսիք են պապայինը, լեյկոպոինը, լեկոգինը) և կենդանական ծագման ֆերմենտների, ինչպիսիք են լիդազան, տրիպսինը, էլաստազան, ինչպես առանձին, այնպես էլ դրանց և այդ դեղանյութերի ու ֆիզիկական միջոցների (լազերային ճառագայթներ) հետ համատեղ օգտագործումը բարերար է ազդում ողնուղեղի վնասումից հետո խանգարված ֆունկցիաների վերականգնման վրա: Նրա առաջարկած բուժման մեթոդները ամփոփված են «Ողնուղեղի օրգանական վնասումների ֆերմենտոթերապիա» մենագրության մեջ (1973 թ.): Այդ մեթոդները ներկայումս լայնորեն կիրառվում են ոչ միայն մեր հանրապետության կլինիկական բժշկության մեջ, այլ նաև Սանկտ-Պետերբուրգի Ա. Լ. Պալենովի անվ. նյարդավիրաբուժության ինստիտուտի կլինիկայում և այլուր: Հայաստանում, ընդհանուր առմամբ, 17 տարվա ընթացքում նրա առաջարկված մեթոդներով բուժվել է 8596 հիվանդ: Ուրախությամբ պետք է նշել, որ բուժման այս մեթոդները փորձարկվել և կըրկին բարձր գնահատականի են արժանացել ռումինական գիտնականներ Ն. Մարկովիչի, Ի. Ստոյկի, Ա. Պետրեսկուի և ուրիշների կողմից:

Լևոն Մատինյանի գիտական հետազոտությունների արդյունքները ամփոփվել են նրա 5 մենագրություններում և շուրջ 200-ից ավելի գիտական հոդվածներում ու մի շարք մեթոդական հանձնարարականներում: Զեկուցվել են արտասահմանյան բազմաթիվ երկրներում (Չեխոսլովակիա, Հունգարիա, Ռումինիա, Կանադա, ԱՄՆ, Ճապոնիա, Հարավսլավիա և այլն) հրավիրված միջազգային կոնգրեսներում, գիտաժողովներում: Նրա գիտական աշխատանքները մեջբերվել են մերձավոր և հեռավոր արտասահմանյան 56 գիտական հրապարակումներում:

Պրոֆեսոր Մատինյանի անմիջական ղեկավարությամբ պաշտպանվել են 10 թեկնածուական և 2 դոկտորական թեզեր:

Պրոֆեսոր Լ. Մատինյանի անսահման աշխատասիրությունը, բարությունը, շիտակությունը, շռայլ ու անմնացորդ նվիրումը գիտությանը և իր ժողովրդին, բարձր են գնահատվել ինչպես մեր, այնպես էլ արտասահմանյան ֆիզիոլոգիական հասարակայնության կողմից: Նա ընտրված է ուղեղի հետազոտման միջազգային կազմակերպության անդամ (Ֆրանսիա, 1979), Եվրոպական ֆիզիոլոգիական ընկերության անդամ (Հոլանդիա, 1995), Ամերիկայի ֆիզիոլոգիական ընկերության անդամ (1996), Շարժողական հսկողության հետազոտման միջազգային կազմակերպության անդամ (ԱՄՆ, 1994), Նյու Յորքի ակադեմիայի ակադեմիկոս (1995), Բնապահպանության և կենսագործունեության անվտանգության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս (Սանկտ-Պետերբուրգ, 1996) և մի շարք այլ ֆիզիոլոգիական ընկերությունների և խորհուրդների անդամ, 1997 թվականին «Տարվա մարդ»:

Հայաստանի գիտությունների Ազգային ակադեմիայի Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիկոլոգիայի ինստիտուտի և Հայաստանի ֆիզիոլոգիական ընկերության կողմից հրավիրված գիտական նիստը՝ նվիրված գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Լ. Մատինյանի ծննդյան 75 և գիտական գործունեության 50-ամյակին, մեկ անգամ ևս ապացուցեց այդ բարի մարդու և ճանաչված գիտնականի նկատմամբ ունեցած մեր սերն ու հարգանքը:

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, կենս. գիտ. դոկտոր

Խ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Նույն ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, կենս. գիտությունների դոկտոր

Զ. ՍԱՐԳՍՅԱՆ
Նույն ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, կենս. գիտությունների դոկտոր

Բաց նամակ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՍՈՒԼԵՅՄԱՆ ԴԵՄԻՐԵԼԻՆ

Ձեր նախնիների կողմից 1915 թվականին ձերբազատված ցեղասպանության հետևանքով այժմյան Թուրքիայի մասը կազմող պատմական Հայաստանի տարածքները հայաթափ դարձան: Դուք հիմա համառորեն ժխտում եք այդ տմարդի արարքը, կամ մեղքը գցում եք այն տարիների ձեր արյունակիցների վրա, կամ փորձում այլ և այլ կերպով պատճառաբանել 20-րդ դարի այդ մեծ ոճրագործությունը: Դեռ ողջ են այդ դաժան եղելությունների դժբախտ ականատեսները: Ես դրանց թվին եմ պատկանում:

Այնուհետև, եղեռնը շարունակվեց: Այս անգամ արդեն ձեր սերնդակիցների կողմից: Դրանց զոհ գնացին Թուրքիայի տարածքում անտերունչ մնացած հայոց հավատքի քրիստոնեության խորհրդանիշները՝ բազմահազար վանքերն ու եկեղեցիները, սրբատեղերը, խաչքարերը: Դրանց մի քսանիսը (Տեկորի տաճարը, Խծկոնքի վանքային համալիրը, Մշո սբ. Կարապետի և Առաքելոց վանքերը, Նարեկավանքը և այլն, և այլն) պայթեցվել ու հողին են հավասարեցվել կամ այլ միջոցներով ավերումների են ենթարկվել. Օրինակ՝ Անիի Սմբատյան պարիսպների, Խոշավանքի, Վարագավանքի, Բաղեշի Աստվածամոր և շատ ուրիշ հուշարձանների սրբատաշ քարերը տեղահանվել ու օգտագործվել են այլ նպատակների համար: Ցավոք, դրանց մի քանիսին անձամբ ականատես եմ եղել: Արդյո՞ք դրանք էլ մեղադրվում են դավաճանության մեջ, թե՞ դա հետապնդում է մեկ անմարդկային նպատակ՝ իսպառ ոչնչացնել հայերի երբեմնի գոյության հետքերը: Բայց պատմությունը ջնջել հնարավոր չէ: Տասնամյակների ընթացքում Թուրքիայում գործադրված այդ վանդալությունները փաստագրված են բազմաթիվ ձևերով ու հրատարակումներով, դրանք հայտնի են քաղաքակիրթ ողջ աշխարհին:

Պարոն նախագահ.

Թուրքիայում ավերված բազմաթիվ վանքերն ու եկեղեցիները բացի հայոց հավատքի խորհրդանիշներ լինելուց, հայկական արվեստի ու ճարտարապետության մեծարժեք ստեղծագործություններ էին, մեր հանճարեղ նախնիների թողած հիշատակները: Դրանցից շատերը քաղաքակիրթ աշխարհի համընդհանուր ճանաչմանն ու բարձր գնահատանքին են արժանացել: Դրանց ոչնչացումը դատապարտվում է միջազգային օրենքներով: Դուք շարունակում եք անտեսել Եվրոպական պառլամենտի 1987 թվականի որոշումը՝ Թուրքիայի տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների հավատքի հուշարձանների նկատմամբ խնամք ու հոգատարություն կազմակերպելու վերաբերյալ:

Ձերոնց պարսավելի օրինակը որդեգրեցին ձեր արյունակից մեր հարևանները: Նախիջևանը ամբողջովին դատարկվեց հայերից, բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր անտերունչ մնալով, ավերվում են:

Ձեռք-ձեռքի տված Ադրբեջանի հետ, շրջափակել եք ծայրահեղ ծանր պայմաններում հայտնված, ավերիչ երկրաշարժից մեծապես տուժած Հայաստանի Հանրապետությունը: Ձեք կարծո՞ւմ, որ այդպիսի արարքները անվայել են մի երկրի համար, որը ջանքեր է գործադրում անդամ դառնալու Եվրոպական ընտանիքին. ժամանակը չէ՞ գոնե դույզն չափով մեղանչել անցյալում կատարվածների համար և կոնկրետ քայլերով դա ապացուցել:

Հայ ժողովուրդը 2001 թվականին նշելու է քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Այդ կապակցությամբ Հայաստանում տարվում են նախապատրաստական կարգի տարբեր միջոցառումներ, նաև՝ վանքերի և եկեղեցիների վերանորոգման աշխատանքներ: Կուզենայինք, որ թեկուզ ուշացած, նույնպիսի ջանքեր գործադրվեն Թուրքիայի տարածքում գտնվող հուշարձանների, առաջին հերթին Աղթամարի տաճարի և միջնադարյան Հայաստանի երբեմնի մայրաքաղաք՝ Անիի հուշարձանների նկատմամբ: Վերջինները մեծապես տուժել են 1988 թ. երկրաշարժից, առանձնապես՝ Մայր տաճարը, որի կառուցման հազարամյակը լրանում է նույն 2001 թվականին:

Պարոն նախագահ.

Դիմելով Ձեզ այս հարցով, կուզենայինք, որ թուրքական կառավարությունը միջոցներ տրամադրի վերոհիշյալ հուշարձաններում վերականգնման-նորոգման աշխատանքներ ձեռնարկելու համար, պայմանով՝ որ նախագծումն ու իրականացումը կատարվի Հայաստանի համապատասխան մասնագետների ու քարագործ վարպետների ներգրավմամբ: Դա անհրաժեշտ է, որպեսզի այլևս ականատես չլինենք այնպիսի անցանկալի արդյունքի, ինչպիսին տեղի ունեցավ Անիի Սմբատյան պարիսպների երեսպատումները վերականգնելու կապակցությամբ:

Կուզենք հավատալ, որ Ձեզ ուղղված այս դիմումը դրական արձագանք կգտնի: Քանի որ մեր պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններն առայժմ չեն հաստատված, ուստի կատարելով հայկական հուշարձանների ճակատագրով բազում նախանձախնդիրների ցանկությունը, Ձեզ եմ դիմում ու ակնկալում Ձեր բարեխիղճ կարգադրությունը:

Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախագահ

Անին շարունակվում է ավերվել

Ընդունված ու տարածված կարծիք գոյություն ունի, որ Անին հիմնովին ավերվել է երկրաշարժից:

Այդպիսի կարծիքը դարձել է տարածված, որովհետև հին հայկական ճարտարապետության արդեն բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ, որոշ կառույցների շատ երկրաշարժերին դիմանալը վերագրվել է հիմնականում բարձրորակ շինարարական արվեստին: Իհարկե, կառուցող վարպետների պրոֆեսիոնալ բարձր մակարդակը, հատկապես պաշտամունքային օբյեկտների շինարարության նկատմամբ ունեցած արտակարգ ուշադիր վերաբերմունքի փաստը, առկա է և հիմնավորված, բայց ոչ բավարար: Շինարարության հակաերկրաշարժային սկզբունքների և միջոցառումների գոյության ու դրանց ուսումնասիրման ու պարզաբանման ուղղությամբ փորձեր գրեթե չեն եղել:

Անցյալում այդ հրեղեն արհավիրքի դեմ, հաշվի առնելով տեղական շինանյութերի հատկությունները և այլ հանգամանքներ, **կիրառվել են որոշակի հակասեյսմիկ սկզբունքներ ու միջոցառումներ՝ տարբեր տեսակի շինությունների ստեղծման ժամանակ:** Որոնք են դրանք:

Նախ, քաղաքի տեղանքի ընտրության հարցի լուծումը: Անի քաղաքը նույնպես, ինչպես և մեր լեռնաշխարհի բազմաթիվ բնակավայրեր (եթե ոչ բոլորը), ինչպես և առանձին ամրոց կամ պաշտամունքային կառույցներ, ժողովրդի դարավոր փորձից ելնելով, ինչպես և պաշտպանական պահանջները բավարարելը նկատի ունենալով, դասավորված են եղել լեռնալանջային, հրվանդանային տեղանքների վրա:

Հիմնականում երկու կողմից խորը, ժայռապատ ձորերով շրջապատված, որոնցով հոսում են լեռնային ջրերը և երրորդ՝ ցամաք և դեպի լեռնալանջ բարձրացող կողմը՝ արհեստական պաշտպանական կառույցներով:

Այդ երրորդ կողմից էլ պարիսպների որոշակի դասավորությամբ, արվում էր հասանելի պաշտպանվող գլխավոր մասը դեպի բնակատեղին:

Այդպիսով, միշտ օտարներից պաշտպանվելու համար հայ ժողովուրդը, իր քաղաքաշինությամբ, առաջին հերթին բավարարել է այդ կարևորագույն պահանջը:

Նման մոտեցման հետևանքով լուծվել է նաև կառույցների հիմնատակերն ապահով ընտրության առաջնային խնդիրը, ինչպես օրինակ Գառնին, Ամբերդը, Բջնին, Անին և ուրիշ բնակավայրերը, որոնք գտնվել են հսկայական ժայռեղեն հրվանդանների բնականից շատ ապահով տարածքներում:

Այդ գործնական եզրակացությանը հանգել են հայ շինարարները, նույնպես փորձի հիման վրա, քանի որ գրեթե յուրաքանչյուր սերնդի ժամանակաշրջանում տեղի է ունեցել առնվազն մեկ (և ավելի անգամ) այդ աահեղ արհավիրքը, որի հետևանքները չէին կարող անուշադրության մատնել:

Եվ դա ստիպում էր ժողովրդին՝ համակերպվել իր մի բուռ երկրամասի «խենթություններին», այդ թվում և հաճախակի երկրաշարժերին: Ճապոնիայում բնությունը մի բարեբախտություն է ստեղծել այդ չարիքների վնասը նվազեցնելու ուղղությամբ, հատկապես անցյալում, որ բնակելի տները ստեղծվել են բամբուկ կոչված փայտեղենով, որոնցով կառուցում էին կրող և կրվող կոնստրուկցիաները, և կառույցները ստացվում էր արտակարգ թեթև և ոչ «մարդասպան» (ոչ թե երկաթբետոնե սալերով, որոնց վնասը շատ մեծ է փլուզման ժամանակ):

Այսօր արդեն ունենալով զարգացման ամենաբարձր մակարդակ, ճապոնացիներն ընտեղծում են ժամանակակից շինանյութերով, բայց միանգամայն հակասեյսմիկ կառույցներ: Նույնիսկ բարձրահարկ կառույցը տասալվում է պոկվելով իր հիմքից, բայց պահպանում է իր ունեցած ձևը ու ունեցած հարկաբաժինները, չտալով ոչ մի զոհ...

Մեզ մոտ, անհանգիստ Հայաստան լեռնաշխարհում, մեր շինարար նախնիները հնարավոր են գտել մշակել բարձրարտարապետության ասպարեզում, սեյսմայնությունության գլխատների կտուրները հենել չորս սյուների և համապատասխան չորս պատերի վրա, փայտե խաչաձև կոնստրուկցիայով, որը ապահովել է չորս ուղղություններով եկող ցնցումներին դիմադրել միաժամանակ, մարելով ավերող ալիքը դեպի վեր փոքրացող փայտյա քառանկյունի օղակներում, որոնցով ստեղծվել է փայտյա գմբեթանման տարածական համակարգը:

Այդ հնարքն էլ հենց դարձել է հետագայում տաշված քարերից ստեղծված գմբեթների նախատիպը: Ընդ որում, գմբեթը շարվում էր ավելի թեթև տուֆատեսակներից, որը հենվում էր կառույցի չորս հենապատերի վրա մեկնված կամարների վրա, որոնց հիմքերը դասավորված լինելով չորս ուղղությամբ, իրենց վրա էին վերցնում երկրաշարժից եկող հրող ուժի մարումը, ապահովելով գմբեթի անսասան վիճակը:

Եվ ահա, Անիի միջնադարյան շինությունների հիմնական [illegible] տասխան չորս պատերի վրա, փայտե խաչաձև կոնստրուկցիայով, որը ապահովել է չորս ուղղություններով եկող ցնցումներին դիմադրել միաժամանակ, մարելով ավերող ալիքը դեպի վեր փոքրացող փայտյա քառանկյունի օղակներում, որոնցով ստեղծվել է փայտյա գմբեթանման տարածական համակարգը:

Այդ հնարքն էլ հենց դարձել է հետագայում տաշված քարերից ստեղծված գմբեթների նախատիպը: Ընդ որում, գմբեթը շարվում էր ավելի թեթև տուֆատեսակներից, որը հենվում էր կառույցի չորս հենապատերի վրա մեկնված կամարների վրա, որոնց հիմքերը դասավորված լինելով չորս ուղղությամբ, իրենց վրա էին վերցնում երկրաշարժից եկող հրող ուժի մարումը, ապահովելով գմբեթի անսասան վիճակը:

Եվ ահա, Անիի միջնադարյան շինությունների հիմնական [illegible] չն վերջերս, որի մասին առանձին) Հովիվի եկեղեցին (թեկուզ կողոպտված երեսպատման քարերով, իր կրաբետոնի կմախքով), Հռիփսիմեն գետի ափին և ուրիշներ, որ մնացել են հիմնականում կանգուն մինչև օրս, չնայած արդեն քանի դար է անցել ամայացած քաղաքի կյանքում և ոչ մի նորոգում չի եղել: Իսկ այդ հարցի կապակցությամբ պարտավոր ենք նշելու, որ որտեղ հուշարձանի հնարավոր թեկուզ «փորր» վնասվածքը խնամքով վերացվել է, ինչպես օրինակ Էջմիածնի Հռիփսիմեն, Գայանեն, ինչպես և Զանգեզուրում և շատ ուրիշ վայրերում ժամանակին վերականգնվել է սեյսմակայունության համակարգը: Իսկ Անին շրջապատող պարիսպների հարատևությունը ապահովել են կլոր թմբուկները, որոնք միացրել են ուղիղ գծով շարված պատերը միմյանց:

[illegible] գլխատների կտուրները հենել չորս սյուների և համապատասխան չորս պատերի վրա, փայտե խաչաձև կոնստրուկցիայով, որը ապահովել է չորս ուղղություններով եկող ցնցումներին դիմադրել միաժամանակ, մարելով ավերող ալիքը դեպի վեր փոքրացող փայտյա քառանկյունի օղակներում, որոնցով ստեղծվել է փայտյա գմբեթանման տարածական համակարգը:

Այդ հնարքն էլ հենց դարձել է հետագայում տաշված քարերից ստեղծված գմբեթների նախատիպը: Ընդ որում, գմբեթը շարվում էր ավելի թեթև տուֆատեսակներից, որը հենվում էր կառույցի չորս հենապատերի վրա մեկնված կամարների վրա, որոնց հիմքերը դասավորված լինելով չորս ուղղությամբ, իրենց վրա էին վերցնում երկրաշարժից եկող հրող ուժի մարումը, ապահովելով գմբեթի անսասան վիճակը:

Եվ ահա, Անիի միջնադարյան շինությունների հիմնական [illegible] չն վերջերս, որի մասին առանձին) Հովիվի եկեղեցին (թեկուզ կողոպտված երեսպատման քարերով, իր կրաբետոնի կմախքով), Հռիփսիմեն գետի ափին և ուրիշներ, որ մնացել են հիմնականում կանգուն մինչև օրս, չնայած արդեն քանի դար է անցել ամայացած քաղաքի կյանքում և ոչ մի նորոգում չի եղել: Իսկ այդ հարցի կապակցությամբ պարտավոր ենք նշելու, որ որտեղ հուշարձանի հնարավոր թեկուզ «փորր» վնասվածքը խնամքով վերացվել է, ինչպես օրինակ Էջմիածնի Հռիփսիմեն, Գայանեն, ինչպես և Զանգեզուրում և շատ ուրիշ վայրերում ժամանակին վերականգնվել է սեյսմակայունության համակարգը: Իսկ Անին շրջապատող պարիսպների հարատևությունը ապահովել են կլոր թմբուկները, որոնք միացրել են ուղիղ գծով շարված պատերը միմյանց:

Պարոն նախագահ.

Դիմելով Ձեզ այս հարցով, կուզենայինք, որ թուրքական կառավարությունը միջոցներ տրամադրի վերոհիշյալ հուշարձաններում վերականգնման-նորոգման աշխատանքներ ձեռնարկելու համար, պայմանով՝ որ նախագծումն ու իրականացումը կատարվի Հայաստանի համապատասխան մասնագետների ու քարագործ վարպետների ներգրավմամբ: Դա անհրաժեշտ է, որպեսզի այլևս ականատես չլինենք այնպիսի անցանկալի արդյունքի, ինչպիսին տեղի ունեցավ Անիի Սմբատյան պարիսպների երեսպատումները վերականգնելու կապակցությամբ:

Կուզենք հավատալ, որ Ձեզ ուղղված այս դիմումը դրական արձագանք կգտնի: Քանի որ մեր պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններն առայժմ չեն հաստատված, ուստի կատարելով հայկական հուշարձանների ճակատագրով բազում նախանձախնդիրների ցանկությունը, Ձեզ եմ դիմում ու ակնկալում Ձեր բարեխիղճ կարգադրությունը:

Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախագահ

Ընդունված ու տարածված կարծիք գոյություն ունի, որ Անին հիմնովին ավերվել է երկրաշարժից:

Այդպիսի կարծիքը դարձել է տարածված, որովհետև հին հայկական ճարտարապետության արդեն բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ, որոշ կառույցների շատ երկրաշարժերին դիմանալը վերագրվել է հիմնականում բարձրորակ շինարարական արվեստին: Իհարկե, կառուցող վարպետների պրոֆեսիոնալ բարձր մակարդակը, հատկապես պաշտամունքային օբյեկտների շինարարության նկատմամբ ունեցած արտակարգ ուշադիր վերաբերմունքի փաստը, առկա է և հիմնավորված, բայց ոչ բավարար: Շինարարության հակաերկրաշարժային սկզբունքների և միջոցառումների գոյության ու դրանց ուսումնասիրման ու պարզաբանման ուղղությամբ փորձեր գրեթե չեն եղել:

Անցյալում այդ հրեղեն արհավիրքի դեմ, հաշվի առնելով տեղական շինանյութերի հատկությունները և այլ հանգամանքներ, **կիրառվել են որոշակի հակասեյսմիկ սկզբունքներ ու միջոցառումներ՝ տարբեր տեսակի շինությունների ստեղծման ժամանակ:** Որոնք են դրանք:

Նախ, քաղաքի տեղանքի ընտրության հարցի լուծումը: Անի քաղաքը նույնպես, ինչպես և մեր լեռնաշխարհի բազմաթիվ բնակավայրեր (եթե ոչ բոլորը), ինչպես և առանձին ամրոց կամ պաշտամունքային կառույցներ, ժողովրդի դարավոր փորձից ելնելով, ինչպես և պաշտպանական պահանջները բավարարելը նկատի ունենալով, դասավորված են եղել լեռնալանջային, հրվանդանային տեղանքների վրա:

Հիմնականում երկու կողմից խորը, ժայռապատ ձորերով շրջապատված, որոնցով հոսում են լեռնային ջրերը և երրորդ՝ ցամաք և դեպի լեռնալանջ բարձրացող կողմը՝ արհեստական պաշտպանական կառույցներով:

Այդ երրորդ կողմից էլ պարիսպների որոշակի դասավորությամբ, արվում էր հասանելի պաշտպանվող գլխավոր մասը դեպի բնակատեղին:

Այդպիսով, միշտ օտարներից պաշտպանվելու համար հայ ժողովուրդը, իր քաղաքաշինությամբ, առաջին հերթին բավարարել է այդ կարևորագույն պահանջը:

Նման մոտեցման հետևանքով լուծվել է նաև կառույցների հիմնատակերն ապահով ընտրության առաջնային խնդիրը, ինչպես օրինակ Գառնին, Ամբերդը, Բջնին, Անին և ուրիշ բնակավայրերը, որոնք գտնվել են հսկայական ժայռեղեն հրվանդանների բնականից շատ ապահով տարածքներում:

Այդ գործնական եզրակացությանը հանգել են հայ շինարարները, նույնպես փորձի հիման վրա, քանի որ գրեթե յուրաքանչյուր սերնդի ժամանակաշրջանում տեղի է ունեցել առնվազն մեկ (և ավելի անգամ) այդ աահեղ արհավիրքը, որի հետևանքները չէին կարող անուշադրության մատնել:

Եվ դա ստիպում էր ժողովրդին՝ համակերպվել իր մի բուռ երկրամասի «խենթություններին», այդ թվում և հաճախակի երկրաշարժերին: Ճապոնիայում բնությունը մի բարեբախտություն է ստեղծել այդ չարիքների վնասը նվազեցնելու ուղղությամբ, հատկապես անցյալում, որ բնակելի տները ստեղծվել են բամբուկ կոչված փայտեղենով, որոնցով կառուցում էին կրող և կրվող կոնստրուկցիաները, և կառույցները ստացվում էր արտակարգ թեթև և ոչ «մարդասպան» (ոչ թե երկաթբետոնե սալերով, որոնց վնասը շատ մեծ է փլուզման ժամանակ):

Այսօր արդեն ունենալով զարգացման ամենաբարձր մակարդակ, ճապոնացիներն ընտեղծում են ժամանակակից շինանյութերով, բայց միանգամայն հակասեյսմիկ կառույցներ: Նույնիսկ բարձրահարկ կառույցը տասալվում է պոկվելով իր հիմքից, բայց պահպանում է իր ունեցած ձևը ու ունեցած հարկաբաժինները, չտալով ոչ մի զոհ...

Մեզ մոտ, անհանգիստ Հայաստան լեռնաշխարհում, մեր շինարար նախնիները հնարավոր են գտել մշակել բարձրարտարապետության ասպարեզում, սեյսմայնությունության

«ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ— ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ»

Լե Շատելյե-Բրաունի սկզբունքը, որը դպրոցական ֆիզիկայի դասընթացից հայտնի էլեկտրամագնիսական ինդուկցիայի երևույթի վերաբերյալ Լենցի կանոնի ընդհանրացումն է, ճիշտ կլինի անվանել Լենցի-Լե Շատելյե-Բրաունի՝ ԼՇԲ սկզբունքը: Այն կարելի է ձևակերպել այսպես.

Կամայական ֆիզիկական համակարգում, որի հավասարակշռված վիճակը խախտվում է արտաքին կամ ներքին որևէ երևույթով, սկսվում են գործընթացներ, որոնք տեղի են ունենում իրենց իսկ առաջացման պատճառները՝ այդ երևույթները կասեցնելու, վերացնելու ուղղությամբ:

Զևակերպումից ակնհայտ է, որ ԼՇԲ-սկզբունքը վերաբերում է մեր աշխարհի երևույթներում հայտնաբերվող «ազդեցություն-հակազդեցություն» իրողությանը, իսկ վերջինիս որոշակի օրինաչափությունները արտահայտվում են նաև Նյուտոնի Երրորդ օրենքով, ինչպես և ֆիզիկական համակարգի տվյալ վիճակը պահպանելու հատկության՝ իներտության միջոցով:

Նյուտոնի Երրորդ օրենքի ընդհանրացված իմաստն այն է, որ ազդեցությանը հետևվում է հակազդեցությունը, ընդ որում ազդեցության և հակազդեցության ուժերը միմյանց համարժեք են՝ նույն բնույթը և մեծությունն ունեն: Պատկերավոր ասած, ընդունվում է մեր աշխարհի երևույթներում առավելապես հայտնաբերվող «փոխադարձելիության սկզբունքի» իսկությունը, որի արտահայտություններից է, օրինակ, մարդկային հարաբերություններում, միայն հազվադեպ բացառություններում չգործող, ատվածաշնչյան այն ճշմարտությունը, որ պետք է վարվել դիմացինի հետ այնպես, ինչպիսի վերաբերմունք ակնկալում ես բո նկատմամբ: Նյուտոնի Երրորդ օրենքը ճշգրիտ ձևակերպմամբ մեխանիկական երևույթներում գործում է կենտրոնական ուժերի դեպքում և չի գործում, Նյուտոնի պատկերացմամբ, ներգիոն ուժերի, նաև մասնավոր դեպքերում էլեկտրամագնիսական ուժերի համար: Նկատենք, եթե նկատի առնվի, որ Նյուտոնի Երրորդ օրենքի ճշգրիտ արտահայտությունից հետևում է, որ տվյալ ազդեցության ուղղակի հակազդեցությունը ծագում է ակնթարթորեն, ապա Էներգիայի պահպանության օրենքից և փոխազդեցության էներգիայի հաղորդման վերջավոր արագության՝ $V \leqslant C$ ($C = 3.10^8$մ/վ— լույսի արագությունն է վակուումում) գոյության փաստից ստացվում է, որ այն գործում է, երբ փոխազդող առարկաների արագությունները տվյալ հաշվանքի համակարգի նկատմամբ բավարարում են $V \ll C$— պայմանին, որը և հանդիսանում է Նյուտոնի մեխանիկայի կիրառելիության սահմաններից մեկը: Այսպիսով, Նյուտոնի Երրորդ օրենքը ճշգրիտ ձևակերպմամբ իրականում տեղի չունի, այն իմաստով, որ տվյալ ազդեցությանը համապատասխանող հակազդեցությունը ծագում է ոչ թե ակնթարթորեն, այլ որոշակի ուշացումով: Այնուամենայնիվ, ընդունվում է, որ մարդու համար սովորական, նաև հայտնաբերվող տարածաժամանակային տիրույթներում միշտ գործում է Նյուտոնի Երրորդ օրենքը բավարար մոտավորությամբ. ազդեցությունն ու հակազդեցությունը հայտնաբերվում են տարբեր չափերով և ձևերով բոլոր երևույթներում՝ փոխազդեցություններում և համապատասխան շարժումներում:

Իներտությունը կամայական ֆիզիկական համակարգի, օրինակ մեկ առարկայի, հատկությունը է, որով այն պահպանում է՝ ձգտում է պահպանել իր որոշակի վիճակը արտաքին կամ ներքին ազդեցությունների դեպքում: Այլ խոսքով, իներտության շնորհիվ առարկան հակազդում և դիմադրում է իր վիճակը փոփոխող արտաքին, նաև ներքին ազդեցություններին: Մեծ իներտությամբ օժտված առարկայի որևէ վիճակի տվյալ փոփոխությունը տեղի է ունենում ավելի դժվար, հետևաբար ժամանակի ընթացքում ավելի դանդաղ՝ առավել երկար ժամանակում, փոքր իներտությամբ առարկայի նույն վիճակի նույն պայմաններում, նույն փոփոխությունն առաջացնելու համար անհրաժեշտ ժամանակի համեմատությամբ: Մասնավորապես իներտության բացակայության դեպքում տվյալ ֆիզիկական համակարգի վիճակի որևէ փոփոխություն պետք է կատարվի ակնթարթորեն: Այստեղ հարկ է նկատել, որ էներգիայի հաղորդման արագության վերջավոր լինելու փաստը՝ $V \leqslant C$ հավանաբար պայմանավորված է և՛ կամայական փոխազդեցության, և՛ համապատասխան էներգիայի իներտության հատկություններով: Իներտության վերաբերյալ պատկերացումները պարզաբանելու նպատակով դիտարկենք, համեմատաբար մանրամասն, առարկայի **մեխանիկական շարժման որևէ վիճակը պահպանելու հատկությունը,** որը ներկայումս առավել լավ է ուսումնասիրված: Տվյալ հաշվանքի համակարգի նկատմամբ առարկայի $V \ll C$ արագությունների դեպքում. Նյուտոնի Երկրորդ օրենքի համապատասխան արտահայտություններից, գրված մեխանիկական շարժման պարզագույն տեսակների՝ համընթաց և պտտական շարժումների համար, այնհայտ է, որ բազմաբնույթ շարժումներից ամենապարզի՝ մեխանիկական շարժման երկու պարզագույն տեսակների դեպքում առարկայի իներտությունը որոշվում է տարբեր մեծություններով. համընթաց շարժման դեպքում՝ առարկայի **իներտ զանգվածով,** իսկ տվյալ առանցքի նկատմամբ պտտական շարժման դեպքում՝ այդ առանցքի նկատմամբ առարկայի **իներցիայի** մոմենտով: Վերջինս միարժեքորեն պայմանավորված է պտտման առանցքի նկատմամբ առարկայի զանգվածի բաշխվածությամբ: «Իներտ զանգված» արտահայտությամբ ընդգծվում է մեր աշխարհի այն իրողությունը, որ առարկայի զանգվածով բնութագրվում է և՛ իներտության հատկությունը համընթաց շարժման դեպքում, և՛ պայմանավորված է գրավիտացիոն՝ առարկաների իրար ձգելու փոխազդեցությունը: Վերջինս բնութագրվում է «գրավիտացիոն զանգվածի» հասկացությամբ, որի իմաստը պարզ է իրար նման գրվող Նյուտոնի Տիեզերական ձգողության և Կուլոնի Էլեկտրաստատիկ փոխազդեցության օրենքների համեմատությունից. որ, եթե էլեկտրական լիցքով պայմանավորված է առարկաների էլեկտրական փոխազդեցությունը, ապա գրավիտացիոն զանգվածով՝ գրավիտացիոն լիցքով պայմանավորված է առարկաների գրավիտացիոն փոխազդեցությունը: Այս նըմանության հետ զուգահեռ էլեկտրական և գրավիտացիոն փոխազդեցությունների միջև գոյություն ունի իներտության հասկացության կարևոր տարբերություն, որի էությունը հետևյալն է. եթե էլեկտրական փոխազդեցության դեպքում առարկայի իներտության չափը նրա զանգվածն է, որը տարբեր առարկաների համար տարբեր է, ապա գրավիտացիոն փոխազդեցության դեպքում իներտության հատկությունը որևէ տարբերություն տարբեր զանգվածներով առարկաների համար գոյություն չունի: Վերջինս հաստատվում է այն իրողությամբ, որ Երկրի գրավիտացիոն՝ ձգողության ուժերի դաշտում նույն բարձրությունից տարբեր զանգվածներով առարկաների ազատ անկման արագացումները նույնն են՝ $9,8$մ/վ^2, այլ խոսքով՝ տեղի ունի Համարժեքության սկզբունքը, որը Էյնշտեյնի Ընդհանուր հարաբերականության տեսության պոստուլատներից է, և նշանակում է, որ տվյալ առարկայի իներտ և գրավիտացիոն զանգվածները համընկնում են: Բացի այդ, հարկ է նշել, որ, եթե դեռևս հայտնի չէ, թե ինչով է պայմանավորված էլեկտրական լիցքը, ապա փորձերից, նաև Էյնշտեյնի Հարաբերականության տեսության պատկերացումներից հետևում է, որ առարկայի զանգվածը, այսինքն իներտության հատկությունը մեխանիկական շարժման վիճակի փոփոխությունների նկատմամբ, ինչպես նաև գրավիտացիոն փոխազդեցության ունակությունը պայմանավորված են նրանում պարունակվող նյութի քանակությամբ, բաղկացուցիչ մասնիկների քառսային շարժումներով և փոխազդեցություններով, նաև առարկայի, որպես ամբողջի, շարժումներով և արտաքին միջավայրի հետ փոխազդեցություններով որոշվող արդյունարար էներգիայով: Այդուամենայնիվ, նման եզրակացությանը համապատասխանող ընդհանուր օրինաչափությունները և վերջնական պատկերացումները դեռևս լիովին պարզաբանված և ձևակերպված չեն: Այսպես, օրինակ. տարրական մասնիկների ֆիզիկայի հետազոտություններում համադրվում են բոլոր հատկություններով նույնատիպ երկու մասնիկ՝ էլեկտրոնը և մյուոնը, որոնք տարբերվում են միայն զանգվածով. մյուոնի զանգվածը $\sim$ 200 անգամ ավելի է էլեկտրոնի զանգվածից: Այս և նման փաստերը բացատրելու համար ենթադրվում է, որ բացի փորձերով հայտնաբերվող վեկտորական ուժեղ, թույլ, էլեկտրամագնիսական և գրավիտացիոն հիմնական փոխազդեցության դաշտերից գոյություն ունի նաև ինչ-որ ակսիլյարային դաշտ, որի հետ փոխազդեցությամբ էլ ի վերջո պայմանավորված է միկրոմասնիկի, հետևաբար և կամայական առարկայի զանգվածը, նաև իներտության և գրավիտացիոն փոխազդեցության ունակությունները:

Այսպիսով, նկատի ունենալով շարժումներից ամենապարզի՝ մեխանիկական շարժման դեպքում առարկայի իներտության վերաբերյալ պատկերացումները և հիմնվելով այն իրողության վրա, որ մեր աշխարհում հայտնաբերվող բազմաբնույթ երևույթներից յուրաքանչյուրն ի վերջո բնութագրվում է համապատասխան որոշակի էներգիայով, հետևաբար և զանգվածով, կարելի է ենթադրել, որ կամայական ֆիզիկական համակարգերի իներտության հատկությունները գոյություն ունեն և արտահայտվում են ավել կամ պակաս չափով մեր աշխարհի սկզբունքորեն բոլոր երևույթներում, առանց որևէ սահմանափակման: Ընդ որում, տարբեր ֆիզիկական համակարգերի հետ տեղի ունեցող տարբեր երևույթներում իներտությունը կարող է որոշվել տարբեր մեծություններով՝ համապատասխան օրինաչափություններով, որոնք ի վերջո պետք է արտահայտվեն երևույթների վերջավոր տևողությամբ: Մասնավորապես կենդանական և բուսական, նաև մարդկային աշխարհի երևույթներում հայտնաբերվող իներտությունը, բանաստեղծի խոսքերով ասած, արտահայտվում է նրանով, որ «միանգամից ոչինչ չի լինում այս աշխարհում», ոչինչ տեղի չի ունենում ակնթարթորեն, ընկերքած կենդանի էակի ծնունդից մինչև բնության գարնանային զարթոնքը, բնական արհավիրքներից մինչև հնի վերացումը և նորի ստեղծումը, գիտական հայտնագործություններից մինչև պետականության հզորացումը և ժողովրդի սոցիալական վիճակի բարելավումը և այլն: Նման դատողություններից ելնելով, կարելի է հավանաբար ձևակերպել օրինակ գիտակցության և հոգեբանության, հիշողության և մտածելակերպի, կառավարման և երևույթների ընթացքը նախորոշող հարաբերությունների և պայմանների և այլն իներտության հասկացությունները, որոնք ի վերջո կարող են արտահայտվել որպես միկրոառարկաների որոշակի շարժումների արդյունքներ, հետևաբար և կարող են որոշվել համապատասխան զանգվածներով: Վերջինս տակայն առանձին մանրակրկիտ հետազոտությունների խնդիր է:

Մեր աշխարհի «ազդեցություն-հակազդեցություն» իրողության երրորդ օրինաչափությունը՝ **ԼՇԲ-սկզբունքը,** համաձայն տեսական և փորձարարական հետազոտությունների, գործում է ֆիզիկական համակարգի կայուն հավասարակշռության վիճակի փոփոխությունների դեպքում: Այն արտահայտվում է արտաքին և կամ ներքին ազդեցությունների հետևանքով վիճակի փոփոխությունները կասեցնող՝ վերացնող և հավասարակշռության վիճակը վերականգնող գործընթացներով: Այլ խոսքով կարելի է ասել, որ ֆիզիկական համակարգի կայուն հավասարակշռության վիճակի գոյության նախապայմանը ԼՇԲ-սկզբունքը է: Պետք է տարբերել ջերմադինամիկական՝ ֆիզիկական համակարգի **մեխանիկական և ջերմադինամիկական հավասարակշռության վիճակները:** Մեխանիկական հավասարակշռության վիճակը կարող է լինել կայուն, որի դեպքում ֆիզիկական համակարգի պոտենցիալ էներգիան ստանում է նվազագույն արժեք, այսինքն պոտենցիալ էներգիայի հնարավոր փոփոխությունները դրական են, անկայուն հավասարակշռության վիճակում պոտենցիալ էներգիան ունի մեծագույն արժեք, իսկ անտարբեր հավասարակշռության վիճակում պոտենցիալ էներգիայի հնարավոր փոփոխությունները բացակայում են: Ֆիզիկական համակարգի ջերմադինամիկական հավասարակշռության վիճակում՝ համաձայն Ջերմադինամիկայի Զրոյական սկզբունքի ամբողջ համակարգի համար բացարձակ ջերմաստիճանը ստանում է որոշակի հաստատուն արժեք, և այդ վիճակի ջերմադինամիկական հավասարակշռությունը, ինչպես նաև էնտրոպիան ստանում են մեծագույն արժեքներ, համաձայն Ջերմադինամիկայի Երկրորդ սկզբունքի: Ջերմադինամիկական հավասարակշռության վիճակում արտաքին պոտենցիալային փոխազդեցության դաշտի առկայության դեպքում ջերմադինամիկական համակարգի մասնիկների ըստ պոտենցիալ էներգիայի Բոլցմանի բաշխման օրենքը համապատասխանում է պոտենցիալ էներգիայի նվազագույն արժեքի պայմանին կայուն հավասարակշռության մեխանիկական վիճակում: Նշանակում է ջերմադինամիկական հավասարակշռության վիճակը միշտ կայուն է, որը բացարձակ իմաստով հնարավոր է արտաքին միջավայրից մեկուսացված՝ փակ ջերմադինամիկական համակարգերում: Այսպիսով հավասարակշռության դեպքում ֆիզիկական համակարգի վիճակը բնութագրող որոշակի մեծությունների՝ վիճակի փոփոխիչներ ընտանում են ծայրահեղ (էքստրեմում) արժեքները: Օգտվելով կամայական անընդհատ փոփոխիչի մեծագույն կամ փոքրագույն՝ ծայրահեղ արժեքները որոշելու մաթեմատիկական կանոններից, կարելի է ԼՇԲ-սկզբունքը արտահայտել մաթեմատիկորեն, այսպես կոչված «նշանների կանոնի» տեսքով, համապատասխան այդ սկզբունքի «հակազդեցության» իմաստին:

Էլեկտրամագնիսական փոխազդեցություններով պայմանավորված երևույթներում «նշանների կանոնը» համապատասխանում է Էլեկտրոմագնիսական ինդուկցիայի դեպքում գործող Լենցի կանոնին, որը էլեկտրամագնիսական փոխազդեցության դաշտի հիմնական՝ Մաքսուելի հավասարումներում սրտահայտվում է էլեկտրական և մագնիսական դաշտերի վեկտորների՝ շրջապտույտներին համապատասխանող հավասարումների ոչ համաչափ՝ «—» նշանով տարբերվող տեսքով: Այդ հավասարումներից պակնհայտ է, որ Լենցի կանոնով՝ ԼՇԲ-սկզբունքով է ապահովվում որևէ միջավայրում էներգիայի վերջավոր արժեքներով էլեկտրամագնիսական տատանումների, հետևաբար և ալիքների առաջացումը, այսինքն դինամիկ հավասարակշռության՝ կայուն վիճակի ստեղծումը: Հակառակ՝ Լենցի կանոնի չգործելու դեպքում, դժվար չէ հասկանալ, որ էլեկտրական կամ մագնիսական դաշտերի փոփոխման սկզբնական վերջավոր էներգիան ժամանակի ընթացքում կձգտեր անվերջ մեծ արժեքների: Այլ խոսքով կըխախտվեր և՛ էներգիայի պահպանության օրենքը, և՛ կբացասվեր էլեկտրամագնիսական երևույթներում դինամիկ հավասարակշռության վիճակների հնարավորությունը՝ համապատասխան անհրաժեշտ հետևություններով:

Նկատի ունենալով, որ տեսական և փորձարարական հետազոտությունների համաձայն, մարդու համար սովորական տարածաժամանակային տիրույթներում հիմնական փոխազդեցությունները երկուսն են՝ էլեկտրամագնիսական և գրավիտացիոն, ընդ որում գրավիտացիոնը անհամեմատ փոքր է էլեկտրամագնիսականից, կարելի է հավանաբար ենթադրել, որ ջերմային և մեխանիկական երևույթներում հայտնաբերվող ԼՇԲ-սկզբունքը ի վերջո սկզբնավորվում է Լենցի կանոնից:

Մեխանիկական երևույթներում ԼՇԲ-սկզբունքն արտահայտող «նշանների կանոնը» ֆիզիկական համակարգի կայուն հավասարակշռության վիճակի գոյության պայմանն է, որը նշանակում է. որևէ առարկայի հավասարակշռության վիճակը վերականգնող գործընթացներով: Այլ խոսքով կարելի է ասել, որ ֆիզիկական համակարգի կայուն հավասարակշռության վիճակի գոյության նախապայմանը ԼՇԲ-սկզբունքը է: Պետք է տարբերել ջերմադինամիկական՝ ֆիզիկական համակարգի **մեխանիկական և ջերմադինամիկական հավասարակշռության վիճակները:** Մեխանիկական հավասարակշռության վիճակը կարող է լինել կայուն, որի դեպքում ֆիզիկական համակարգի պոտենցիալ էներգիան ստանում է նվազագույն արժեք, այսինքն պոտենցիալ էներգիայի հնարավոր փոփոխությունները դրական են, անկայուն հավասարակշռության վիճակում պոտենցիալ էներգիան ունի մեծագույն արժեք, իսկ անտարբեր հավասարակշռության վիճակում պոտենցիալ էներգիայի հնարավոր փոփոխությունները բացակայում են: Ֆիզիկական համակարգի ջերմադինամիկական հավասարակշռության վիճակում՝ համաձայն Ջերմադինամիկայի Զրոյական սկզբունքի ամբողջ համակարգի համար բացարձակ ջերմաստիճանը ստանում է որոշակի հաստատուն արժեք, և այդ վիճակի ջերմադինամիկական հավասարակշռությունը, ինչպես նաև էնտրոպիան ստանում են մեծագույն արժեքներ, համաձայն Ջերմադինամիկայի Երկրորդ սկզբունքի: Ջերմադինամիկական հավասարակշռության վիճակում արտաքին պոտենցիալային փոխազդեցության դաշտի առկայության դեպքում ջերմադինամիկական համակարգի մասնիկների ըստ պոտենցիալ էներգիայի Բոլցմանի բաշխման օրենքը համապատասխանում է պոտենցիալ էներգիայի նվազագույն արժեքի պայմանին կայուն հավասարակշռության մեխանիկական վիճակում: Նշանակում է ջերմադինամիկական հավասարակշռության վիճակը միշտ կայուն է, որը բացարձակ իմաստով հնարավոր է արտաքին միջավայրից մեկուսացված՝ փակ ջերմադինամիկական համակարգերում: Այսպիսով հավասարակշռության դեպքում ֆիզիկական համակարգի վիճակը բնութագրող որոշակի մեծությունների՝ վիճակի փոփոխիչներ ընտանում են ծայրահեղ (էքստրեմում) արժեքները: Օգտվելով կամայական անընդհատ փոփոխիչի մեծագույն կամ փոքրագույն՝ ծայրահեղ արժեքները որոշելու մաթեմատիկական կանոններից, կարելի է ԼՇԲ-սկզբունքը արտահայտել մաթեմատիկորեն, այսպես կոչված «նշանների կանոնի» տեսքով, համապատասխան այդ սկզբունքի «հակազդեցության» իմաստին:

Էլեկտրամագնիսական փոխազդեցություններով պայմանավորված երևույթներում «նշանների կանոնը» համապատասխանում է Էլեկտրոմագնիսական ինդուկցիայի դեպքում գործող Լենցի կանոնին, որը էլեկտրամագնիսական փոխազդեցության դաշտի հիմնական՝ Մաքսուելի հավասարումներում սրտահայտվում է էլեկտրական և մագնիսական դաշտերի վեկտորների՝ շրջապտույտներին համապատասխանող հավասարումների ոչ համաչափ՝ «—» նշանով տարբերվող տեսքով: Այդ հավասարումներից պակնհայտ է, որ Լենցի կանոնով՝ ԼՇԲ-սկզբունքով է ապահովվում որևէ միջավայրում էներգիայի վերջավոր արժեքներով էլեկտրամագնիսական տատանումների, հետևաբար և ալիքների առաջացումը, այսինքն դինամիկ հավասարակշռության՝ կայուն վիճակի ստեղծումը: Հակառակ՝ Լենցի կանոնի չգործելու դեպքում, դժվար չէ հասկանալ, որ էլեկտրական կամ մագնիսական դաշտերի փոփոխման սկզբնական վերջավոր էներգիան ժամանակի ընթացքում կձգտեր անվերջ մեծ արժեքների: Այլ խոսքով կըխախտվեր և՛ էներգիայի պահպանության օրենքը, և՛ կբացասվեր էլեկտրամագնիսական երևույթներում դինամիկ հավասարակշռության վիճակների հնարավորությունը՝ համապատասխան անհրաժեշտ հետևություններով:

Նկատի ունենալով, որ տեսական և փորձարարական հետազոտությունների համաձայն, մարդու համար սովորական տարածաժամանակային տիրույթներում հիմնական փոխազդեցությունները երկուսն են՝ էլեկտրամագնիսական և գրավիտացիոն, ընդ որում գրավիտացիոնը անհամեմատ փոքր է էլեկտրամագնիսականից, կարելի է հավանաբար ենթադրել, որ ջերմային և մեխանիկական երևույթներում հայտնաբերվող ԼՇԲ-սկզբունքը ի վերջո սկզբնավորվում է Լենցի կանոնից:

Մեխանիկական երևույթներում ԼՇԲ-սկզբունքն արտահայտող «նշանների կանոնը» ֆիզիկական համակարգի կայուն հավասարակշռության վիճակի գոյության պայմանն է, որը նշանակում է. որևէ առարկայի հավասարակշռության վիճակի գոյության նախապայմանը ԼՇԲ-սկզբունքը է: Պետք է տարբերել ջերմադինամիկական՝ ֆիզիկական համակարգի **մեխանիկական և ջերմադինամիկական հավասարակշռության վիճակները:** Մեխանիկական հավասարակշռության վիճակը կարող է լինել կայուն, որի դեպքում ֆիզիկական համակարգի պոտենցիալ էներգիան ստանում է նվազագույն արժեք, այսինքն պոտենցիալ էներգիայի հնարավոր փոփոխությունները դրական են, անկայուն հավասարակշռության վիճակում պոտենցիալ էներգիան ունի մեծագույն արժեք, իսկ անտարբեր հավասարակշռության վիճակում պոտենցիալ էներգիայի հնարավոր փոփոխությունները բացակայում են: Ֆիզիկական համակարգի ջերմադինամիկական հավասարակշռության վիճակում՝ համաձայն Ջերմադինամիկայի Զրոյական սկզբունքի ամբողջ համակարգի համար բացարձակ ջերմաստիճանը ստանում է որոշակի հաստատուն արժեք, և այդ վիճակի ջերմադինամիկական հավասարակշռությունը, ինչպես նաև էնտրոպիան ստանում են մեծագույն արժեքներ, համաձայն Ջերմադինամիկայի Երկրորդ սկզբունքի: Ջերմադինամիկական հավասարակշռության վիճակում արտաքին պոտենցիալային փոխազդեցության դաշտի առկայության դեպքում ջերմադինամիկական համակարգի մասնիկների ըստ պոտենցիալ էներգիայի Բոլցմանի բաշխման օրենքը համապատասխանում է պոտենցիալ էներգիայի նվազագույն արժեքի պայմանին կայուն հավասարակշռության մեխանիկական վիճակում: Նշանակում է ջերմադինամիկական հավասարակշռության վիճակը միշտ կայուն է, որը բացարձակ իմաստով հնարավոր է արտաքին միջավայրից մեկուսացված՝ փակ ջերմադինամիկական համակարգերում: Այսպիսով հավասարակշռության դեպքում ֆիզիկական համակարգի վիճակը բնութագրող որոշակի մեծությունների՝ վիճակի փոփոխիչներ ընտանում են ծայրահեղ (էքստրեմում) արժեքները: Օգտվելով կամայական անընդհատ փոփոխիչի մեծագույն կամ փոքրագույն՝ ծայրահեղ արժեքները որոշելու մաթեմատիկական կանոններից, կարելի է ԼՇԲ-սկզբունքը արտահայտել մաթեմատիկորեն, այսպես կոչված «նշանների կանոնի» տեսքով, համապատասխան այդ սկզբունքի «հակազդեցության» իմաստին:

Էլեկտրամագնիսական փոխազդեցություններով պայմանավորված երևույթներում «նշանների կանոնը» համապատասխանում է Էլեկտրոմագնիսական ինդուկցիայի դեպքում գործող Լենցի կանոնին, որը էլեկտրամագնիսական փոխազդեցության դաշտի հիմնական՝ Մաքսուելի հավասարումներում սրտահայտվում է էլեկտրական և մագնիսական դաշտերի վեկտորների՝ շրջապտույտներին համապատասխանող հավասարումների ոչ համաչափ՝ «—» նշանով տարբերվող տեսքով: Այդ հավասարումներից պակնհայտ է, որ Լենցի կանոնով՝ ԼՇԲ-սկզբունքով է ապահովվում որևէ միջավայրում էներգիայի վերջավոր արժեքներով էլեկտրամագնիսական տատանումների, հետևաբար և ալիքների առաջացումը, այսինքն դինամիկ հավասարակշռության՝ կայուն վիճակի ստեղծումը: Հակառակ՝ Լենցի կանոնի չգործելու դեպքում, դժվար չէ հասկանալ, որ էլեկտրական կամ մագնիսական դաշտերի փոփոխման սկզբնական վերջավոր էներգիան ժամանակի ընթացքում կձգտեր անվերջ մեծ արժեքների: Այլ խոսքով կըխախտվեր և՛ էներգիայի պահպանության օրենքը, և՛ կբացասվեր էլեկտրամագնիսական երևույթներում դինամիկ հավասարակշռության վիճակների հնարավորությունը՝ համապատասխան անհրաժեշտ հետևություններով:

Նկատի ունենալով, որ տեսական և փորձարարական հետազոտությունների համաձայն, մարդու համար սովորական տարածաժամանակային տիրույթներում հիմնական փոխազդեցությունները երկուսն են՝ էլեկտրամագնիսական և գրավիտացիոն, ընդ որում գրավիտացիոնը անհամեմատ փոքր է էլեկտրամագնիսականից, կարելի է հավանաբար ենթադրել, որ ջերմային և մեխանիկական երևույթներում հայտնաբերվող ԼՇԲ-սկզբունքը ի վերջո սկզբնավորվում է Լենցի կանոնից:

Դժվար չէ համոզվել, որ ԼՇԲ-սկզբունքը գործում է ոչ միայն անկենդան, այլ նաև կենդանական, բուսական աշխարհների երևույթներում: Օրինակ, ԼՇԲ-սկզբունքի արտահայտություններից կարելի է հասկանալ «սթրեսը», որով բացատրվում են ինքնակարգավորման բազմաբնույթ գործընթացներ, որոնք նպաստում են ընդհանուր բնապահպանությանը: Այսպես օրինակ, Երկրագնդի տվյալ տարածքում կենդանական կամ բուսական աշխարհների որոշակի տեսակների քանակի ապահովումը իրականացվում է «սթրեսի», այսինքն որոշակի հիվանդությունների, հանձարակների և կամ ուրիշ, տվյալ տեսակի ածին հակազդող գործընթացների միջոցով: Կենդանի էակի դեպքում, ինչ-որ սահմաններում, «սթրեսը» մարմնում տեղի ունեցող ոչ սովորական, հանախ հիվանդագին այն երևույթների համախումբն է, որը ուղղված է առողջ վիճակը պահպանելուն, գոյատևման համար վտանգավոր արտաքին, նաև ներքին երևույթները բացառելուն: Մասնավորապես մարդ արարածը կարողանում է երկպատուն պահպանել իր արդյունավետ կենսագործունեության վիճակը, եթե նրանում և՛ հոգեպես, և՛ ֆիզիկապես անընդմեջ գործում է ԼՇԲ-սկզբունքը, որը և նպաստում է նրա էնտրոպիայի նվազմանը: Կենդանի էակի համար հիվանդությունը դառնում է անբուժելի, եթե դադարում է գործել ԼՇԲ-սկզբունքը, որի գործելը կամ չգործելը տեղի է ունենում ինչպես ինքնակամ, այնպես էլ հարկադրաբար: Նման դատողություններից հետևում է, որ կենդանի էակի առնվազն ինքնապաշտպանության բնազդը ԼՇԲ-ընկըզբունքի արտահայտությունն է: Եվ, որքան էլ անսպասելի գուցե, բայց ԼՇԲ-սկզբունքի այս մեկնաբանությամբ կարելի է նույնիսկ բացատրել մեր՝ հայերիս պատմության ողբերգական շրջաններում այնուամենայնիվ, լուսավոր և ուսանելի այն իրողությունը, որ պատմական փաստերի վկայությամբ բոլոր ժամանակներում եղեռնից փրկվել են առավելապես այն տարածքների հայերը, որոնք ինքնապաշտպանվել և դիմագրավել են թուրք ելուզակներին: Հայոց պատմության տխուր իրողություններով պայմանավորված աշխարհասփյուռ հայ գաղթօջախների ստեղծումը, հայ համայնքների գոյությունն ու պահպանությունը, հետևաբար հայերի իրենց ինքնությունը պահպանելու, երբեմն նաև կորցնելու վտանգն ու փաստերը նույնպես բացատրվում են ԼՇԲ-սկզբունքի պատկերացումներով: Ժամանակին Լեհաստանում ապաստանած հայերին ճնշելու, վերացնելու որևէ աճ կամ սարսափ չի եղել, և դժբախտաբար չի գործել ԼՇԲ-սկզբունքը, որի տխուր արդյունքում հայերը կորցրել են ինքնությունը, դավանանքով և լեզվով սերտաճելով լեհերին: Այս օրինակից մնում է եզրակացնել, որ աշխարհի քաղաքակիրթ երկրներում ապրող հայերի համար միշտ առկա է Եվոլյուցիոն ճանապարհով ինքնությունը կորցնելու վտանգը: Մյուս կողմից, օրինակ, Ստամբուլում, նաև մահմեդական այլ քաղաքներում, երկրներում դարասկզբի եղեռնագործությունների սարսափն ու հիշողությունը հայերի հոգում արթուն են պահել ինքնապաշտպանության բնազդը՝ գործել է ԼՇԲ-սկզբունքը, որի արդյունքում այդ տարածքներում հայ գաղթօջախները գոյատևում են ամուր հիմքերի վրա, հնարավորությունների առավելագույնով՝ սատարելով տեղի հայության ինքնության պահպանությանը:

Ընդհանրացնելով, կարելի է եզրակացնել, որ կամայական ֆիզիկական համակարգում ազդեցության և հակազդեցության գործընթացների արդյունքում հնարավոր են վերջնական վիճակի ստեղծման երեք տարբերակ: 1. Վիճակի փոփոխություններն առաջացնող արտաքին կամ ներքին ազդեցությունները ճնշում և վերացնում են հակազդեցությունները՝ հաստատվում է փոփոխությունն առաջացնող ազդեցության գերիշխանությունը, որով պայմանավորված վիճակը ահավասարակշռված է: Այս տարբերակի օրինակներից են մեխանիկական անկայուն վիճակը, բնական նաև հասարակական աղետները՝ երկրաշարժերը, հրաբխային ժայթքումները, հասարակարգերի փոփոխությունները, պետությունների ստեղծումը, կամ կործանումը և այլն: 2. Վիճակի փոփոխություններն առաջացնող արտաքին, նաև ներքին ազդեցությունները ճնշվում և վերացվում են հակազդեցությունների շնորհիվ, ստեղծվում է հավասարակշռված վիճակ, որը հնարավոր է մեկուսացված ֆիզիկական համակարգում և որն ի վերջո «ջերմային մահի» վիճակն է, երբ զարգանալու և պտաջընթացի բոլոր հնարավորությունները նվազագույն են: 3. Ֆիզիկական համակարգում ստեղծվում է դինամիկ հավասարակշռության վիճակ արտաքին նաև ներքին ազդեցություններով պայմանավորված . երևույթների և այդ երևույթներին հակազդող գործընթացների միջև: Այլ խոսքով, ժամանակի ընթացքում տարածության մեջ փոփոխվող արտաքին ազդեցությունների և ֆիզիկական համակարգի կողմից համապատասխան հակազդեցությունների հետևանքով տեղի են ունենում վիճակի կայունացված, նաև պարբերական փոփոխություններ ժամանակի և տարածության մեջ: Ընդ որում, արտաքին ազդեցությունների հետ ֆիզիկական համակարգի որոշակի փոխհամաձայնվածության՝ կոհերենտության դեպքում, վիճակի փոփոխություններն ստանում են ռեզոնանսային բնույթ, իսկ վերջինիս հետևանքները տվյալ ֆիզիկական համակարգի համար կարող են հանգեցնել և՛ դրական, և՛ բացասական արդյունքների, որոնց դիտարկումը, սակայն, այլ հոդվածի նյութ է:

Սառա ՄԻՏՈՅԱՆ
ՀՊՃՀ ֆիզիկայի մասնաճյուղի դոցենտ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐՏԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՏՔԵՐԻՑ

Խոսքը, նայած, թե ինչ մարդուց ում է ոտղղված, ամենազորեղ բժիշկն է:

Այս բոլորի փառքը քեզ է պատկանում, դուն էիր, սիրելի ընկեր, որ ինձ սիրտ տըվիր ոտանավորներս նույնիսկ կարդալու սրա-նրա մոտ, դուն ինձ համարձակություն շնչեցիր իմ անվարժ քնարով հրապարակ մտնելու, որից եւ այնքան պատկառում էի, բայց որ սիրում էի բոլոր սրտով:

Գրականական աշխարհի խայտառակությունից անցնենք մի ավելի խայտառակ աշխարհ՝ հոգևորականությանը (ախ, ե՞րբ պետք է մենք պրծնենք դրանցից, կարծես թե այդ սև փարաջան փաթաթած է իմ սրտի վրա, այնպես է ինձ նեղացնում):

...Շատ հրեշավոր է՝ երբ չկա հոգեկան ամենափոքր խաղաղություն, ավելի ճիշտը՝ երբ հոգին ամեն վայրկյան լիքն է հուսահատության իավարով և վրդովմունքի տանջանքով, երբ մարդու բոլոր մտքերն ու զգացմունքները հալածված են հալածանքի ամենասոսկալի ձևով:

Գրող մարդը... կյանքի բոլոր հոգսերի, ընտանեկան բոլոր պահանջների, անձնական բոլոր կարիքների դեմ միայն մի բան ունի— յուր ձիրքը, յուր տաղանդը, իսկ այդ ոչ ոք չի ընդունում, ոչ կինը, ոչ երեխան, ոչ դուքանչին, ոչ հացթուխը, ոչ շոր ծախողը և այլն, և այլն: Ահա նույնիսկ այդ ինտելիգենտ կոչված հոգով տգետները հրապարակով ասում են, թե գրականությունը դեռ գործ չի և գրողը քանի ֆիզիկական ուժ ունի պետք է գործ- այսինքն կողմնակի պարապմունք ունենա, հա դրանք հաշտեցնում են գրականությունն ու տերտերությունը, հաշվապահությունը, գործակատարությունը և ստանում են գրողի տանջանքն ու տառապանքը, այն նյարդային ցնցումները, քայքայումն ու հոգնածությունը, որ իրան հետ բերում է արբազան կոչված ոգևորությունը: Բայց նրանք, որոնք հոգով ազգակցություն ունեն գրողի հետ, որոնց տրված է աներևույթ տեսնելու և անձամբ չփորձած զգալու ընդունակություն, նրանք մտածում են և խոսում են քեզ նըման:

Երբ որ մարդ զուրկ է նյութական կարողությունից, զուրկ ուսումից, զուրկ կյանք

Ո՞ՒՐ Է ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԳԱԶԸ, ՊԱՐՈՆ ՆԱԽԱՐԱՐ

Անդրադառնալով ՀՀ Էներգետիկայի նախարար (արդեն՝ նախկին) պարոն Մարտիրոսյանի հուսադրող և սենսացիոն հայտարարություններին, այն է՝ «Մենք 1997 թ. գարնանը կսկսենք նավթի և գազի որոնման աշխատանքները ու 1998 թ. կունենանք մեր սեփական գազը...» («Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 31 հունվարի 1997 թ.), հարկ ենք համարում հարցնել պարոն նախարարին՝ ո՞ւր է մեր սեփական գազը, պարոն նախարար:

1998 թ. ավարտին մնացել են հաշված օրեր: Նավթի և գազի գծով կատարվող ամերիկյան որոնողական աշխատանքների առաջին փուլը (ամերիկյան առաջին հորատանցքը) ավարտված է ամիսներ առաջ և չկա ոչ մի հուսադրող նախադրյալ, որ այս տարվա մնացած մի քանի օրերի ընթացքում հնարավոր կլինի ծակել ևս մի հորատանցք, կամ գոնե սկսել այն:

Մինչ այդ ծակված հորատանցքի արդյունքների մասին ոչ երկրաբանների համար ասեմ. երկրաբանական որոնողական աշխատանքներում կա մի չգրված օրենք. առաջին երկրաբանական փորվածքը (տվյալ դեպքում հորատանցքը) տեղադրել օգտակար հանածոն հատելու ամենահավանական տեղում: Կարծում եմ, որ ամերիկյան մասնագետները քաջատեղյակ են այդ օրենքին կամ չեմ կարծում, որ նրանք չեն ձգտել շուտափույթ դրական արդյունքի հասնել:

Ինչևէ, չեմ ցանկանում հիասթափեցնել ընթերցողներին, թե ես քաջատեղյակ եմ Ողջաբերդի արդեն իսկ ծակված հորատանցքի ողջ տվյալներին, բայց հարկ եմ համարում նշել, որ այն ծակվել է նախագծվածից նույնիսկ ավելի խորը, սակայն սպասվող դրական արդյունքներն այդպես էլ չկան և չեն երևում: Ինչո՞ւ: Ինչո՞ւ մեզ չեն ասում, թե ինչու: Ով է մեր ժողովրդի փոխարեն որոշում, որ այդ արդյունքները ժողովրդին, մեզ՝ Հայաստանի երկրաբաններիս, չեն հետաքրքրում: Ամենքին էլ պարզ է, որ նավթի և գազի ամենաշնչին քանակները հայտնաբերելու դեպքում պ-ն Գ. Մարտիրոսյանը, ի լուր աշխարհի կհայտարարեր իր կանխատեսումների արդարացման ու իր հաղթանակի մասին: Սակայն պարոն Մարտիրոսյանը լռում է, եթե հաշվի չառնենք նրա հեռուստաելույթները էլեկտրաէներգիայի գների բարձրացման հիմնավորումների վերաբերյալ: Լռում են մեր լրատվական միջոցները: Ուրեմն դրական արդյունք չկա: Մեր սեփական գազը այս տարի էլ չունեցա՞ք: Սպասենք, տեսնենք, թե հիմա ինչ կասի պարոն Մարտիրոսյանը, այսինքն՝ ե՞րբ կունենանք մեր սեփական գազը և կունենա՞նք արդյոք:

Այս վերջին բառերը գրելիս ես ակամա հիշեցի մեծ դիվանագետ Ու. Չերչիլի արտահայտած հետևյալ միտքը. «Լավ դիվանագետը նա է, ով ասում է թե ինչ կլինի վաղը, մեկ շաբաթ, մեկ ամիս, մեկ տարի հետո և վերջում հիմնավորում, թե ինչու չեղավ»: Գուցե մեր արհեստավարժ նախարարը նույնպես այդպես վարվի:

Ինձ հետաքրքրում են մի քանի հարցեր ևս, որոնց պատասխաններն ակնկալում եմ պարոն Մարտիրոսյանից՝ նույն «Հայաստանի Հանրապետություն» թերթի էջերում:

— Ինչպե՞ս է զգում իրեն պարոն Մարտիրոսյանը Նավթի և գազի վերաբերյալ արած այդ անհաջող կանխագուշակումից հետո:

— Այսուհետև որքա՞ն նավթ կարող ենք արդյունահանել, եթե Հայաստանի ընդերքից 150 միլիոն տոննա նավթ չի ստացվում և դրա ո՞ր մասն ենք տալու Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

— Կբարձրանա՞ր, արդյոք, էլեկտրաէներգիայի սակագինը, եթե մենք ունենայինք «մեր սեփական գազը»:

— Որքա՞ն կմնա պաշտոնում ժողովրդի բազմիցս դժգոհությունը վայելած նախարարը և չի ցանկանում, արդյոք, հրաժարական տալ կառավարական պաշտոններից ընդհանրապես:

1997 թ. մայիսի 3-ին «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթում ես հանդես եմ եկել բավական ընդարձակ հոդվածով, որտեղ հիմնավորել եմ պարոն Գ. Մարտիրոսյանի կողմից արված սենսացիոն հայտարարությունների բնույթը՝ «հրաժարվել մեծ սպասելիքներից», որպեսզի խուսափենք մեծ հիասթափությունից: Չնայած դրան, պարոն նախարարը շարունակել է իր հայտարարությունների արշավը (տես՝ «Իրավունք» շաբաթաթերթի 1997 թ. 17 հուլիսի համարում տպագրված Վ. Գրիգորյանի «Եվս մեկ անգամ Հայաստանում նավթի և գազի բաղձալի պաշարների մասին» հոդվածը):

Այդուհանդերձ, ես կարծում եմ, որ գոնե այս անգամ նա կլսի ու կընդունի իմ խորհուրդը, իսկ եթե ոչ՝ մեղքն իր վզին: Ժողովուրդն ասում է. «Խելոքը սովորում է ուրիշների սխալների վրա, իսկ...»: Եվ ես կարծում եմ, որ հանրապետության էներգետիկայի շատ «արհեստավարժ» նախարարը այսուհետև կհրաժարվի հանրապետության «գլխավոր երկրաբանի» ֆունկցիաներն էլ իր վրա վերցնելուց:

Հ.Գ.— Երբ հոդվածը պատրաստ էր տպագրության, իմացանք, որ Հայաստանի Հանրապետության վարչապետը գտել է պարոն Մարտիրոսյանին ժողովրդի ցասումից փրկելու հիանալի միջոց՝ «փախցրել է» դեպի վեր, որպեսզի ժողովուրդը արմատական այլ պահանջներ չներկայացնի:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր



Կոլումբիայի համալսարանը ամերիկյան խոշորագույն ուսումնական հաստատությունն է: Այստեղ միայն ժուռնալիստիկայի ֆակուլտետում սովորում են հինգ հազարից ավելի ուսանողներ՝ աշխարհի տարբեր երկրներից:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐՏԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

(Սկիզբը՝ 7-րդ էջում)

Ես շատ առաձգական բանավորություն ունեմ: Կտանեմ ամենադաժան զրկանք զվարթ ու անսասան, որպես թե այս սարի գլխից մի սև ամպ է անց կացել, բայց չեմ կարող ապրել զրկանքների մեջ՝ ես չեմ սիրում չքավորությունը. եթե մի օր ինձ զգամ չքավոր, սիրտս կպատռի: Ես միշտ համոզված եմ, որ շատ հարուստ մարդ եմ, միայն հարընտությունը այս րոպեիս մոտը չի...

Ամենամեծ ու ամենախոր միտքը միշտ կարող ես լսել մի ապուշի բերանից, ամենացած ամբոխը հազար ու մի բարձր մտքեր է շուտ ու մուտ տալիս ամեն օր: Բանաստեղծության տեսակետից միտքը ինչ է որ՝ միայն նյութ, հում նյութ, մատերիալ Բանաստեղծ չի նա, ով որ հայտնում է, թե մարդը ոչինչ է բնության առաջ: Բանաստեղծը նա է, ով որ թեկուզ դրանք լսելուց հետո, այնպես ներկայացնի ու պատկերացնի այդ հարաբերությունը, որ ընթերցողն զգա ու տեսնի:

Թող բանաստեղծի տաղանդը էլ համարվի մի նավթահոր, որ պետք է շահագործել:

Գրողի հետ չպետք է պայմաններ կապել, գրողին պետք է ընթացք տալ, հնար տալ, և նա կտա այն, ինչ որ թերևս չեն էլ սպասում:

...Երբ որ մարդ առողջ է, շատ է տպավորվում և հեշտ էլ գրում:

...Կարոտը ինձ համար ամենաթանկագին զգացումն է: Հոհնասարակ հագուրդը, կուշտ լինելը, ավելի ճիշտ՝ հոլիպանալը, իջեցնում է մարդուն ներքև: Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան: Իդեալներն ինչ են որ,— հոգու կարոտներ: Եվ հենց դրա համար է լավ մենակությունը. մենակության մեջ ամենավսեմ հանույքներ կան և դրանք այն րոպեներն են, երբ մարդու հոգին լայն, խաղաղ, անվրդով ծփում է և սիրտը քաղցրքաղցր ճմլում երբեմն որոշ, երբեմն անորոշ կարոտներով: Եվ այդ րոպեների մեջն է, որ հայտնագործություններ են անում մարդիկ, ստեղծագործում են, իհարկե, ևս առավել՝ բանաստեղծ մարդիկ:

...Փոքրիկ արարածներն են կյանք թունավորում, մեծ արարածները թույն չունեն, նրանք միայն կյանք կարող են տալ: Բայց շատ մեք հուսահատվի, տեսնում եք, մի թեթև քամի է հարկավոր, որ ցրի այդ կյանք թունավորողներին:

...Որքան մեծ բան է, եթե գրողը կարողանա ճանապարհորդել, ուսումնասիրել իր ժողովուրդը, ուսումնասիրել նրա ավանդույթները, լեզուն, ադաթները: Սաստիկ զգում եմ ես այս կարիքը ամեն անգամ, երբ լինում եմ ժողովրդի մեջ— ծով է, ծով:

...Բանաստեղծի համար տրպավորությունները հարստություն են, վայ այն բանաստեղծին, որ աղքատ է տպավորություններով:

Աշխարքում եթե մի քանի լավ բաներ կան— մեկն, անշուշտ, ճանապարհորդությունն է: Ճանապարհորդելով մարդու և աչքն է բացվում և սիրտը: Իզուր չեն ասել, թե շատ կարդացողը չի իմանալ, շատ մաև եկողը կիմանա, մանավանդ, գրողի համար...

Ախ, ինչ սքանչելի խոսք է Եղիցի լույս... ստեղծագործության աստվածային խորհուրդը կամ ստեղծագործական հանճարի ուժը հայտնում է այս երկու խոսքով՝ Եղիցի լույս...

Մի ծանր, մռայլ անուարքերություն, մի դաժան ատանություն ծիծաղում է, շնչում է իմ բոլոր ձգտումների ու հուզմունքների վրա և սպաղեցնում, սառեցնում: Ես ըդգում եմ, որ մեռած չեմ իբրև բանաստեղծ, բայց կաշկանդված եմ: Քեզ հետ արդյոք մղձավանջ չի՞ պատահել, ըզգում ես, որ ապրում ես, բայց չես կարողանում շարժվել, շունչդ լսում ես, բայց չես կարողանում գոռալ:

Ես չեմ տխրում, որովհետև խոր ու լայն զգում եմ, որ վշտոտ ազգը, տառապած ազգը շարժվում է իմ մեջ, ուզում է խոսել, Հենց այս էր, որ ասում էի մի ազգային, մեծ պոեմա եմ ձևել, բայց ծալում հետաձգում եմ: Գիտես, իմ մեջ մի զարհուրելի լույս է ծագել՝ մեծ գործ շինելու ցանկությունը: Բայց մեր աշխարհում մենք ունենք գրողի տառապանքը, առանց ունենալու գրողի կյանքը:

Էհ, սիրելիս, մենք առանց այն էլ կուչ եկած ենք, եթե միշտ նրա մասին մտածես, որ քեզ ավելի կուչ ածես, պրծանք: Այնուհետև դու չես, այլ մի ուրիշ մարդ...

Հայոց ազգը ոչ բանաստեղծ է տեսել, ոչ բանաստեղծ է պահել, ոչ էլ սիրել է, որ ունենա: Ինչ են հասկանում բանաստեղծի հոգին ու լեզուն, չոր, էգոիստ մարդիկ են: Նրանք, թեկուզ իրենց նպաստներով, որ մոտենան բանաստեղծին, բանաստեղծի բանաստեղծությունը կվերանա:

Կյանքից դժգոհ մարդիկ ինչ անհեթեթ բան էլ որ ասեն՝ միշտ իրավունք ունեն: Միայն մի պայմանով, որ բանը սրտից լինի ասած:

Մեր կանանցից մարդ չի դուրս գալ և մենք միշտ չկերած կկշտանանք, ախորժակդ այնպես կփակեն, որ երրեք քաղց չզգաս, գնաս ու որձկալով մաև գաս: Բայց տխուր մարդ միշտ ունի մի քնքուշ էական հետ գեղեցիկ, գեղարվեստական կապերով կապված լինելու կարոտը, երևզային կյանքով երբեմն ապրելու տենչը:

Այսպես, չգիտենք ինչի հավատանք, ինչ սիրենք, ինչ ցանկանանք, տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեզր ալեկոծ արյան մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները:

...Կյանքում շատ գեղեցիկ բաներ կան, բայց նրանք բոլորն էլ տանջանքի համար են

Ինչ էլ լավ սկսվեց: Նա մոտեցավ քեզ, քսմսվեց ոտքերիդ, աչքերիդ նայելով՝ խըղճալի մլավեց, իսկ հետո, պոչը վեր տնկած, վազեց քո ետևից մինչև տուն:

Կատվի ձագը հաճույքից մռլտալով խմեց քո տված կաթը և շնորհակալությամբ նայեց քեզ:

Դու որոշեցիր կատվի ձագին առայժմ դուրս չանել, տանջվելով այն մտքից, թե գուցե փողոցային կատու է: Հետո պիտի հասկանաս, որ բախտդ բերել է, որ կատուն տոհմածառ չունի: Բանն այն է, որ քո բնակարանում անպատիժ տիրություն անող մկները, որոնք առանց հարցնելու ճաշակում էին քո ունեցած-չունեցած սնունդը, հանկարծ անհետացան: Միշտ է, մկներին քշելու հետ միասին կատուն քրքրեց նաև քո բնակարանի պատառները, բայց դա նույն հաջողությամբ անում են նաև ցեղական ու տոհմիկ կատուները, իսկ ինչ վերաբերում է մկներ որսալը, ապա «ազնվական» կատուները դա իրենց արժանապատվությունից ցածր են համարում: Դրանք սիրում են վզներից կախած մեդալները զնգզնգացնել և մեկ էլ սեքսով զբաղվել՝ համապատասխան վճարով:

Չնայած «արիստոկրատներն» էլ ունեն իրենց առավելությունները: Նրանց վարքը կանխատեսելի է՝ իրենց իսկ տեսակի ծագումնաբանական

Փորձա՞նք, թե...

նկարագրով: Եթե քեզ պետք է տնային փսիխոթերապևտ, ուրեմն գնիր պարսկական կատու: Եթե կատվամազից ալերգիա ունես՝ ձեռք բեր հաբեշականը՝ գրեթե անմազ ու տկլոր է: Եթե երեխադ քույրիկ կամ եղբայրիկ է ուզում, նրա համար գնիր բիրմայական կատու, որը տիրոջ ետևից մաև է գալիս շան նըման և երբեք չի չանկրտում:

Իսկ սառնամանիքների ու ցրտի ժամանակ սիբիրյան կատվից լավ ջեռուցիչ չեք ճարի:

Կատու ունենալու պարագայում առաջին խնդիրը նրա քնելու տեղի հարցն է: Սակայն միանգամից ասենք՝ այս հարցը դուք չեք որոշում: Կատուն քնում է այնտեղ, որտեղ ինքն է նախընտրում: Դա կարող է լինել քո անկողինը, բազկաթոռը, պահարանի արկղը, հեռուստացույցի տակ կամ գլխին, հանդերձապահարանում: Մի խոսքով, ուր որ քեֆը ուզի:

Որտե՞ղ է հոգում իր պետքերը կատուն: Որտեղ հարմար գտնի: Իսկ ո՞վ փողի ձեռքը կրակն է ընկել, կարող է շատ թանկ գնով հատուկ թասիկ գնել: Սակայն մեկ է, կատվի մեզի հոտից չեք ազատվի: Ըստ որում, դա հենց մեզի հոտը չէ, այլ այն հորմոնների, որ փիսիկը շաղ է տալիս աջ ու ձախ՝ դրանով նկարագրվ: Եթե քեզ պետք է տնային փսիխոթերապևտ, ուրեմն գնիր պարսկական կատու: Եթե կատվամազից ալերգիա ունես՝ ձեռք բեր հաբեշականը՝ գրեթե անմազ ու տկլոր է: Եթե երեխադ քույրիկ կամ եղբայրիկ է ուզում, նրա համար գնիր բիրմայական կատու, որը տիրոջ ետևից մաև է գալիս շան նըման և երբեք չի չանկրտում:

Իսկ սառնամանիքների ու ցրտի ժամանակ սիբիրյան կատվից լավ ջեռուցիչ չեք ճարի:

Կատու ունենալու պարագայում առաջին խնդիրը նրա քնելու տեղի հարցն է: Սակայն միանգամից ասենք՝ այս հարցը դուք չեք որոշում: Կատուն քնում է այնտեղ, որտեղ ինքն է նախընտրում: Դա կարող է լինել քո անկողինը, բազկաթոռը, պահարանի արկղը, հեռուստացույցի տակ կամ գլխին, հանդերձապահարանում: Մի խոսքով, ուր որ քեֆը ուզի:

Որտե՞ղ է հոգում իր պետքերը կատուն: Որտեղ հարմար գտնի: Իսկ ո՞վ փողի ձեռքը կրակն է ընկել, կարող է շատ թանկ գնով հատուկ թասիկ գնել: Սակայն մեկ է, կատվի մեզի հոտից չեք ազատվի: Ըստ որում, դա հենց մեզի հոտը չէ, այլ այն հորմոնների, որ փիսիկը շաղ է տալիս աջ ու ձախ՝ դրանով գծելով իր կենսական ոլորտների սահմանը:

Ինչ վերաբերում է սննդին, ապա ձեր սեղանի սովորական ուտելիքները կատվին պետք չեն: Հատուկ սնունդ է պետք. ընտրանին մեծ է, գնները՝ խելքից դուրս: Շաբաթվա սննդի գինը կազմում է մոտ 4.000 դրամ: Մի հազարերկու հազար էլ կատուն է գողանում, ստացվում է 6 հազար դրամ: Իսկ կատուն չգողանալ չի կարող, բնույթն է այդպիսին: Որոշ (ոչ քիչ) միջոցներ էլ պետք են զանազան դեղամիջոցների համար:

Եթե կատու ես պահում, ուրեմն պատրաստ եղիր՝ «այդ ո՞վ է քեզ չանկրտել» հարցին: Վերքերը երկար չեն լավանում, քանի որ կատվի եղուգներում կա գրգռող ֆերմենտ: Կծած տեղերը ոչ ախտահանեք, ոչ էլ որևէ բան քսեք: Ինքն իրեն արագ լավանում է:

Եվ, այնուամենայնիվ, նայում ես այդ «փորձանքին» և ինքդ քեզ ասում, որ «քո ահռելի ծախսերը և դժոխքը, որ քո տանը ստեղծել է կատուն, ոչինչ են այն մեծ բավականության հետ, որ դու ստանում ես նրա գոյությունից»:

Մի քանի տեղեկություններ կատվի պոչի մասին:

— Եթե տնկված է վեր. կատուն հասկացնում է՝ հիանալի օր է:

— Թեթևակի շարժում է պոչի ծայրը. հարցնում է՝ ի՞նչ ես բերել:

— Կտրուկ վեր ու վար է թափահարում պոչը. զգուշացիր, թռչելու է վրադ:

— Պոչը կախ է գցել. էս էլ կյա՞նք է:

Հայաստանում ապրող կատվի սիրահարներին տեղեկացնենք, որ նրանց գներն ու պահելու ծախսերը, նրանց ստեղծած անհարմարությունները, տված օգուտը և պատճառած անսահման հաճույքը, ամենուր նույնն են: Մնում է դուք ինքներդ որոշեք՝ իսկապես փորձանք են դրանք, թե՝ հաճույք:



Բաժանորդագրվեցեք «Գիտություն» թերթին

Եթե ուզում եք նպաստել «Գիտություն» թերթի համաչափ գործունեությանը և տեղեկություններ ստանալ հանրապետության և աշխարհի գիտական գործընթացների մասին բաժանորդագրվեցեք «Գիտություն» թերթին: Տարեկան բաժնեգինն է 2400 դրամ (ներառյալ առաքման ծախսերը): Հիշե՛ք, «Գիտությունը» ձեր թերթն է:

Հեռախոս՝ 56-80-14:

ԱՄԵՆԱՀԻՆ ԲՈՒՀԸ

Աշխարհի ամենահին ուսումնական հաստատությունը, որը գործում է մինչև օրս, մարոկկոյական Ֆես քաղաքի համալսարանն է: Այն հիմնադրվել է 859 թվականին, այսինքն՝ նշանավոր Օքսֆորդի համալսարանի հիմնադրումից 328 տարի առաջ:

ԱՌԱՋԻՆ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԸ

1854 թվականի աշնանը Լոնդոնի անգլիական բանկում երևաց ինժեներ Ջոն Ֆաուլերը՝ գծագրերով, սխեմաներով ու հաշվարկներով, որոնք վերաբերում էին աշխարհում առաջին ստորգետնյա երկաթուղագծի կառուցմանը, որի նպատակն էր Լոնդոնի կենտրոնի երթևեկությունը թեթևացնել: Բավական է ասել, որ միայն Լոնդոնի կամրջով կառքերով տարեկան անցնում էր 56 միլիոն մարդ: 1860 թվականի մարտին «Մետրոպոլիտեն կոմպանի» ընկերությունն սկսեց առաջին ստորգետնյա երկաթուղու կառուցումը, որը հետագայում այդ ընկերության անունով կոչվեց մետրոպոլիտեն կամ մետրո:

1863 թվականի հունվարի 9-ին Լոնդոնի մետրոյով, որն ուներ 5,5 կմ երկարություն, անցան առաջին ուղևորները: 1890 թվականի նոյեմբերի 4-ին բացվեց մետրոյի էլեկտրիֆիկացված տեղամասը:

Լոնդոնից հետո մետրոպոլիտեններ կառուցվեցին Բուդապեշտում (1896 թ.) Գլազգոյում (1897 թ.) Փարիզում (1900 թ.), Բոստոնում (1901 թ.), Բեռլինում (1902 թ.), Նյու Յորքում (1904 թ.), իսկ հետո՝ Ֆիլադելֆիայում, Համբուրգում, Բուենոս-Այրեսում, Մադրիդում, Վիեննայում...

ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի, Ընդհանուր և անօրգանական քիմիայի, Կենսաքիմիայի ինստիտուտների տնօրենների թափուր տեղերի համար:

Տնօրենի պաշտոնում թեկնածուների առաջադրման իրավունքը, համաձայն ընդունված կարգի, պատկանում է ՀՀ ԳԱԱ բաժանմունքի բյուրոյին, ինստիտուտների գիտական խորհուրդներին, բուհերի գիտական խորհուրդներին, ԳԱԱ անդամներին:

Թեկնածուների հիմնավորված առաջարկությունները ուղարկել մինչև 10.12.98 թ., հետևյալ հասցեով՝

375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունք: Հեռախոս՝ 52-58-05:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 դ. հեռախոս՝ 56-80-14:

«Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչություն: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 30.11.98 թ. (3434—3454):

Թերթի հովանավորն է «ԿԱՆԱՉ» ՓԲԸ

«ГИТУТЮН» («Наука») — газета НАН РА